

22

ժամանակ «Միջին մասնագիտական կրթությամբ առողջապահական ոլորտի տարվա որակյալ մասնագետներ պատրաստող» անվանակարգում հաղթող է ճանաչվել ԵՊՀԲԲ:

Ինչ խոսք, հեշտ չէ ուսումնական գործընթացի համար լիարժեք պայմաններ ստեղծելը, բայց առավել դժվար է բարձր որակավորում ու պարտքի և պատասխանատվության զգացում ունեցող քաղաքացի, հայրենասեր անհատ դաստիարակելը: Առանց այդպիսի քաղաքացիների մեր երազանքների երկիրը չի կառուցվի: Մենք բոլորս ծառայում ենք մեր հայրենիքին և մեզանից յուրաքանչյուրի պարտքն է մեր աշխատանքով հնարավորինս օգտակար լինել նրան: Դա պետք է լինի նաև երիտասարդ սերնդի ձգտումը:

Հայրենասիրական դաստիարակության հարցում քոլեջը որդեգրել է Նժդեհյան գաղափարախոսություն: Սա պատահական չէ: Նժդեհյան գաղափարախոսության առաջին կողմը քոլեջի տնօրեն, ՀՀ ԿԳՆ պետական բժշկական ուսումնական հաստատությունների տնօրենների խորհրդի նախագահ, երկար տարիներ ԵԿՄ վարչության անդամ Մկրտիչ (Սերժ) Մկրտչյանն է: Դեռևս 90-ական թվականներին նրա անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ ստեղծվել է Նժդեհի պաշտպանական մարտական ջոկատը, որը կազմակերպել է Կապանի պաշտպանությունը: Մարտական գործողությունների մասնակցության համար Կառավարության և Պաշտպանության Նախարարության կողմից Մ. Ե. Մկրտչյանն արժանացել է շքանշանների և մեդալների: Նրա հովանավորությամբ տպագրվել են Նժդեհի կենսագրությունը, գաղափարախոսությունը վերաբերող բազմաթիվ գրքեր: 2002 թ. նրա նախաձեռնությամբ և հովանավորությամբ Կապանում կառուցվել է Նժդեհին նվիրված հուշահամալիր:

Քոլեջում արվում է ամեն ինչ ուսանողների առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը խրախուսելու նպատակով: Հայրենասիրական դաստիարակության հարցում «Գարեգին Նժդեհ»-ի գործը կարևորելու նպատակով սահմանված է «Գարեգին Նժդեհ»-անվան ներքոլեջային ուսանողական կրթաթոշակ՝ բաղկացած վկայականից, կրթաբանական և ամենամսյա կրթաթոշակից, որը շնորհվում է ամենամարտնչավոր ուսանողներին:

Մենք հպարտանում ենք մեր հայրենասեր և կիրք շրջանավարտներով, որոնք իրենց պարտքն են կատարել սկսած Մեն հայրենական պատերազմի տարիներից, երբ զինվորական բուժքոչ արտահագուստով ռազմի դաշտերում պայքար էին մղում վիրավորների կյանքի և մահվան սահմանագծում: Նրանցից շատերը լուրջ մասնակցություն ունեցան Արցախյան գոտեմարտին, նաև ապրիլյան քառօրյա պատերազմին, որի ժամանակ ցուցաբերեցին անսահման հայրենասիրություն: Դրա վառ ապացույցն է մեր շրջանավարտ Արցախի Հերոսի կոչման արժանացած Ռոբերտ Աբաջյանը, որի սխրագործությունը երբեք չի մոռացվի: Քոլեջում անցկացվեց մեծ միջոցառում՝ նվիրված նրան, որին հրավիրված էին Ռոբերտ Աբաջյանի ծնողները, հարազատները, ընկերները: Քոլեջի տնօրեն Մ. Ե. Մկրտչյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ տպագրվել է նրան նվիրված գիրք, Ռոբերտ Աբաջյանը հետմահու պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» հուշամեդալով, նրա անունով է կոչվել քոլեջի լաբորատորիաներից մեկը: Քոլեջի Փառքի սրահում, որտեղ ներկայացված են Նժդեհի, Անդրանիկի, Սպարապետի և հայ մյուս ազգային հերոսների նկարներն ու կենսագրականները, ընդգրկվել է նաև Ռոբերտ Աբաջյանի հիշատակի անկյունը:

Քառօրյա պատերազմի օրերին քոլեջի շուրջ 120 ուսանողներ ցանկություն հայտնեցին մեկնել Արցախ: Քոլեջի կողմից կազմվեցին ջոկատներ, կազմակերպվեց կարճատև վերապատրաստման ծրագիր տեղային պատերազմի ժամանակ վիրավորներին անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու և տեղահանելու մասին: Իրենց ձեռքբերած հմտությունները ուսանողները ցուցադրեցին նաև քոլեջի մարզահրապարակում, ստանալով համապատասխան վկայականներ:

Համագործակցություններ

Փոխադարձ այցելությունների միջոցով համագործակցություններ են հաստատվել Ռուսաստանի Ֆեդերացիայի առողջապահության նախարարության ուսումնագիտամեթոդական կենտրոնի, Բելգիայի Տուրնաուտ քաղաքի Հիվանդան բժշկական քոլեջի, Էստոնիայի Տարտու քաղաքի համալսարանի, Կիլնյուսի բժշկական քոլեջի հետ:

Քոլեջը ներգրավվել է Հայաստանում գործող մի շարք միջազգային ծրագրերի, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Ընտանեկան բուժքույրերի» հետդիպլոմային վերապատրաստման ծրագրին, այսինքն իրականացվել է նաև լրացուցիչ կրթական ծրագրեր:



Մանկաբարձության դասի ժամանակ:

գիր: Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ 2006-2010 թ., համագործակցելով առողջապահության ազգային ինստիտուտի ընտանեկան բժշկության ամբիոնի հետ, իրականացվել է թվով 465 գյուղական բուժական մանկաբարձական կետերի և 35 բուժամբուլատորիաների բուժքույրերի 6-ամսյա վերապատրաստում բուժքույրության ծրագրով:

Քոլեջի «Մանկաբուժության» ամբիոնը սերտ համագործակցում է Արաբկիր բժշկական համալիրի «Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի» հետ, ունենք համատեղ մշակված ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Քոլեջը մշտապես սերտ կապի մեջ է պրակտիկ առողջապահության ոլորտի՝ քույրերի միավորման հետ, որի նպատակն է՝ համախմբել բուժքույրերի ջանքերն ու հնարավորությունները զարգացնելու քույրական գործը Հայաստանում, նպաստել բուժքույրերի մասնագիտական գիտելիքների և փորձի խորացմանն ու ընդլայնմանը:

Ընդունելություն

Քոլեջ կարող են դիմել միջնակարգ, հիմնական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձինք:

Այսօր քոլեջում իրականացվում է միջին մասնագիտական բժշկական կրթություն հետևյալ մասնագիտություններով՝ քույրական գործ, մանկաբարձական գործ, դեղագործություն, ատամնատեխնիկական գործ, բուժական կոսմետոլոգիա: Իրականացնում է նաև հանրակրթական 9-ամյա կրթություն ունեցող դիմորդների ընդունելություն: «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» բաժիններում ուսման տևողությունը կազմում է միջնակարգ կրթությամբ ուսանողների համար 3 տարի, իսկ հիմնական կրթություն ունեցողների համար 4 տարի: «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» բաժիններում միջնակարգ կրթությամբ ուսման տևողությունը 2 տարի է, իսկ հիմնական կրթությամբ՝ 3 տարի:

Նաիրա ՆԵՐՍԻՍՅԱՆ,

Երեանի պետական հեռակետային բժշկական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն

ԵՐԲԵՔ ՄԻ ԶԻՋԻՐ ՄԻՋԱԿԻՆ

Միբելի երիտասարդ, խուսափիր այն անտանելի ու կավաշաղախ անվախեղեքից, որոնք թողել են ուրիշները՝ քեզանից առաջ՝ իրենց դանդաղաշարժ սայլակաղբերով: Դու՝ ժամանակակից քո մեքենան հանիր ինտեկտի ու արդի գիտության բանուկ ճանապարհներ, որտեղ կարող ես արագություն հավաքել, արագացում ապահովել:

Մենք հին ժողովուրդ ենք, ու արդեն հազարամյակներում ակոսել ենք մեր ուղին ու այդ լացուկոծի խորք ակոսների միջից չենք կարողանում դուրս հրվել: Դու ավելի խելացի եղիր քան մեր նախնին սերունդները, կերտիր մի պետություն, որը տարածաշրջանի հակասությունները պիտի օգուտի վերածի, դառնա բանկային կապիտալի ու զբոսաշրջության, գիտության ու ժամանակակից տեխնոլոգիաների երկիր: Մենք ամեն ինչ ունենք այս խնդիրը իրագործելու համար՝ պետություն, խելք, հող, ջուր, կամք, ճանապարհ, իսկ աշխարհաքաղաքական մեր դիրքն էլ որքան վտանգավոր է, նույնքան բեղուն է հնարավորություններով:

Այն որ մենք՝ մեր անվախեղեքի մեջ ենք, իր փոքրիկ առավելություններն

Հայոց արքայի պաշտոնական այցը Անգլիա...



Հայոց արքայի պաշտոնական այցը Անգլիա... Մի ուշագրավ պատմական դրվագ՝ թե ինչպես դեռևս յոթ դար առաջ հայկական արքունիքը դիվանագիտական ջանքեր էր գործադրում Եվրոպայի հետ համագործակցության եզրեր գտնելու համար: Ներկայացվող 15-րդ դարի անգլիական մանրանկարը պատկերում է Կլիվիայի Հայոց թագավորության միապետ Լևոն 5-րդի (թագավորել է 1320-1342 թթ.), նկարում Հայոց արքան աջից է) և Անգլիայի թագավոր Էդվարդ 3-րդի հանդիպումը: Ինչպես տեղեկացնում են ժամանակակից, ինչպես նաև ավելի ուշ շրջանի պատմագիրները՝ իր գահակալության ողջ ընթացքում Լևոն 5-րդը դիվանագիտական մեծ ջանքեր էր գործադրում՝ բանակցելով արևմտաեվրոպական երկրների ղեկավարների հետ և փորձելով նրանց կողմից որոշակի աջակցություն ստանալ իր երկրի համար:

Հայոց թագուհիների վերականգնված տարազներ



1. Արտաշեսյան թագուհու տարազ, որը տիպիկ հելլենիզմի դարաշրջանին բնորոշ ռմավորում է, այսպես է հագնվել Էրատո թագուհին
2. Արշակունի թագուհու տարազ, որը կրում է արևելյան նաև իրանական որոշակի ազդեցություն, այսպես է հագնվել Արշակունյաց Փառանձեմ թագուհին
3. Կլիվիայի թագուհու տարազ, որն արդեն կրում է միջնադարյան եվրոպական, հատկապես ֆրանսիական թագուհու զգեստի տարրեր, այսպես է հագնվել Կլիվիայի Կեռան թագուհին՝ Լևոն արքայի կինը
Ինչ խոսք երեքն էլ շքեղ են...

30

ԵՐԲԵՐ ՄԻ ԶԻՋԻՐ ՄԻՋԱԿԻՆ

Էլ ունի, բայց աշխարհից ետ մնացած, կարծես թե դադարել ենք արարել ու տալ, աշխարհացավ ու աշխարհաստեղծ լինել: Հիմա հերթը թոնն է, նոր սերնդինը: Դու ձկուն ես ու բազմալեզու, խելացի ես ու արխայիրտ: Անվախ եղիր, նվաճիր աշխարհը և մեղվի նման ավար-գիտելիքդ բեր քո հայրենիք:

Քո հերթն է արդեն:

Ֆիզիկապես առողջ, սակայն հոգեպես սնանկ պարագիտի մի տեսակ կա, որ անմիջապես, միայն իրեն հայտնի եղանակներով հասկանում է ու և ինչպես մակաբուծվել: Մտնում է աննկատ երակի մեջ, ձուլվում է, ու կամաց-կամաց իրեն է ծառայեցնում քո իսկ սկսած գործը, երբեմն կյանքի գործը: Եթե դու տաղանդավոր ես և ուժեղ, ապա սրանցից խուսափելու մի եղանակ կա՝ քեզ շրջապատի ուժեղ, հախտուն ու խառնվածք ունեցող մարդկանցով: Այդ դեպքում այս պարագիտները արագ ի հայտ են գալիս և լքում են քո թիմը: Բայց եթե դու քեզ շրջապատեցիր նրանցով, ով պիտի անընդհատ գովաբանի ու փափուկ բարձր դնի գլխիդ տակ, ապա ի սկզբանե դատապարտված ես միջակության սահմաններում մնալու:

Աչքերդ լայն բացիր ու ճանաչիր մարդկանց ըստ նրանց գործերի, մի թույլ տուր էմոցիաներն ու բառերը լրացնեն քո առօրյան: Այսօրվա աշխարհում, որտեղ ամեն ինչ կառուցված է վաճառել կառողնալու հիմքով, հիշիր, որ հայրենասիրության և ազգային հարցերում, մարդու մեջ այլ տեսակի հատկանիշներն են, որ քեզ պիտի հետաքրքրեն: Կան գաղափարներ, որոնք սկզբնալիս լինելով, մաքուր են և իսկական: Դա սերն է առ հայրենիք, առ ընկերը, առ ընտանիք: Այս երեքի մեջ, հայկական իրականության մեջ, ամենակարևորը ընկերության գաղափարն է, որը բացարձակ է իր ներքին ազնվությամբ ու նվիրումով, որի մեջ խապառ բացակայում են ամենատարբեր շահախնդրությունները: Մյուս երկուսը կարող են խաբուսիկ լինել: Ուշադիր եղիր, տես, նա՝ ով քեզ հետ մեծ ճանապարհ է դուրս եկել, արդյո՞ք ընկեր ունի, հայրենիքն է՝ սիրում, թե՛ իրեն հայրենիքի «պատասխին», ինչպե՞ս է վերաբերվում ընտանիքին, պատասխանատու՞ է, թե՛ ոչ:

Եթե դու սրտիդ մեջ զգում ես երկրիդ ցավը, ապա դու այն հայորդին ես, որոնցից մեր մեծության բանակն ենք կերտելու: Ինչպիսիք քեզ, անտեղի մի վատնիր ուժերդ, հավաքիր քո շուրջ քո նման առողջ հայորդի ու դուստր, կամ դու նրանց շուրջ՝ հավասար ու ազնիվ, ու ձեռքդ առ քո երկրի վաղվա օրը: Եղանակները բազմազան են՝ քաղաքական պայքարից մինչև հասարակական սատարում ու փոխօգնություն:

Նրանք, ովքեր կփորձեն շահագործել ազգայինը հանուն սեփական եսի, մեզ հետ չեն: Եղիր զգոն:

Երբեք մի զիջիր միջակին:

Մա է քո գերիխնդրը, հայ երիտասարդ:

Կոիվ տուր, պայքարիր, մարտնչիր, ջրի երես հանիր պատեհապաշտ, անգաղափար ու անսկզբունք սրիկային ու, երբեք ձեռք թափ տալով մի լքիր մրցակցության ասպարեզն ու դաշտը: Աշխատանքում կլինի, թե տվորական վեճի մեջ, սեփական բակում, թե օտար քաղաքում, պատռիր նրա դիմակն ու անվախ գնա հաղթանակի: Այսօրվա քո զիջումների արդյունքում ձևավորվող հրեշը վաղը քո նախագահն ու վարչապետն է լինելու, ու դու անարափելու ես նրա հիմարության թափից, լքելու ես երկիրդ, և օտարության մեջ, իշխանության բնույթի վերաբերյալ անօգուտ տրակտատներ ես գրելու, ու այդպես շարունակ, քանի դեռ տեր չես դարձել քո ճակատագրին ու երկրին:

Ինքնաբավությունը երջանկության օրրանն է: Սակայն այն հղի է անասելի կարճատևությամբ ու դանդաղկոտությամբ: Պատվախնդիր եղիր նրա նախանձախնդրության դիմաց, համարձակ նրա կապերի, և ձկուն՝ նրա խարդավանքի: Քո Զեռքում քո ապագան է: Դուրս եկ տնից ու ծնողներդ սպանիչ գործվանքից, զբաղվիր ինքդ քեզանով, ժամանակներին համապատասխան եղիր, փոխիր ապրելակերպդ, հարձակվող եղիր, ատաժներդ սուր: Արթնացրու Հայկին ու Վահագնին քո մեջ: Ցածր խոսիր: Ժպտալով բարկիր, ներողություն խնդրել իմացիր, հարգիր կնոջն ու ել ոտքի նրա դիմաց: Վեր կացրու քո մեջ Հային ի վերջո:

Դուք եք տերը մեր ապագայի: Ուս ուսի տված՝

ԴԵՊԻ ՍՐՈՐԱՍ

Դավիթ ՎԱՆՅԱՆ

Հրայր ՌԻԼՈՒԲԱԲՅԱՆ. «Թումանյանը լինելով պայծառատես, հեռագգաց վկայում էր մարդու եւ բնության գաղտնի ուժերի մասին»


Ֆեյսբուք սոցիալական ցանցում հրապարակագիր Հրայր Ուլուբաբյանը բարձրացրել է իր իսկ ձեռնարկում Կուլտուրայի հեղափոխության՝ գաղափարի մասին: Նրա գրառումներից մեկում կար այսպիսի միտք: Անհրաժեշտ է գիտակցել, որ բազմաթիվ աղանդներից, գլոբալացման ծրագրերից, մասնականությունից փրկվելու համար մենք պետք է եւ պարտավոր ենք կանգնել ինքնամաքման ճանապարհին: «Կան մտավորականներ, ովքեր ասում են՝ դրսի ուժերը մեզ քայքայում են, մեզ կործանման են տանում: Ոչ, եթե ներսից կարգավորվենք, դրսի ոչ մի քամի, ոչ մի հոսանք, ոչ մի ուժ չեն կարող մեզ բեկել, շեղել մեր ճանապարհից: Եթե ինքներս ճիշտ ճանապարհի վրա լինենք, ավելի շատ խոսենք մեծ Կուլտուրայի երկրի կառուցման, մեր ներքին խնդիրների լուծման մասին, մեր ներքին ցավերից եւ այդ ցավերը մեղմելու, դարմանելու, ձար ու հնարի մասին», - գրել էր նա:

Ինչու է «Կուլտուրայի երկիր» եւ ոչ՝ «Մշակույթի երկիր» հարցադրումից էլ սկսվեց իմ գրույցը ճանաչված հրապարակագրի հետ:

Ըստ Հրայր Ուլուբաբյանի «Կուլտուրա» բառը բաղկացած է երկու արմատից՝ «կուլտ» եւ «ուր»: «Կուլտ» լատիներեն բառ է, նշանակում է՝ պաշտամունք, իսկ «ուր»-ը սանսկրիտերեն է, նշանակում է լույս, այսինքն լույսի պաշտամունք: «Մշակույթ» բառն այնքան էլ չի ընդգրկում այդ իմաստը: Բառի ընտրության հարցում եւ չ. Թումանյանը, եւ Գ. Նժդեհը, որ այնքան բծախնդիր էին, հաճախ օգտագործել են «կուլտուրա» բառը, «մշակույթ» բառին գուցա հեռ: Ասում են կուլտուրական մարդ, իսկ մշակույթային մարդ ոչ: Այդ իմաստով «կուլտուրան» ավելի ընդգրկուն հասկացություն է, ավելի բնութագրական: «Մեր ուխտը» բանաստեղծության մեջ չ. Թումանյանն ասում է. «Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս»: «Լույսը» մեր ժողովրդի մեջ շատ հարգված ու հաճախ օգտագործվող բառ է բարի լույս, աչք լույս, լույսը քեզ տեսնողին եւ այլն: Հասարակության զարգացման գործում գլխավոր գործոն է կուլտուրան, որը նշանակում է լույսի բնավածում եւ բարոյականության բարձրացում: Դա իր հերթին նշանակում է՝ ձգտում դեպի Կատարյալը, դեպի Աստված, դեպի այն անսահմանությունը, որ պատկերացնում ենք Աստված ասելիս:

– Ամենուր հնչում է այն միտքը, թե մարդն օտարվել է բնությունից, բնականից, հոգեւոր արմատներից: Կիտում էք մեր փոխդուռն աշխարհի վերաբերյալ նման մոտեցումները:

– Մարդկությունն իրոք փակուղի է մտել: Դեռեւս 20-րդ դարի կեսերից «Հռոմի ակումբից» սկսած արդեն բարձրաձայնում է, թե քաղաքակրթությունը փակուղի է մտել, գիտատեխնիկական զարգացումը չնայած նկատելի է, բայց կա գուցա հեռ ելուցիական աղետ, բարոյախոգեբանական անկում: Գիտակից մարդիկ այդ մասին բարձրաձայնում են: Եթե որոշ գիտնականներ, մտավորականներ Արեւմուտքի



հետ դեռ հույսեր են կապում, Արեւմուտքի վերաբերյալ 20-րդ դարի սկզբներին լույս տեսած «Եվրոպայի մայրամուտը» գրքում ակնարկվեց, որ Արեւմուտքը կործանման է տանում մարդկությանը, Երկիր մոլորակը վտանգված է: Վիճակից դուրս գալու ելքը խելոք մարդիկ տեսնում էին Արեւելքում: Յունգը հոգեբանության բնագավառում իր մի շարք մեկնաբանություններում, մասնավորապես, «Մահացածների տիբեթյան գրքում» այնպիսի մտքեր էր արտահայտում, որոնք խիստ արդիական էին, իսկ Արեւմուտքը դեռ պատրաստ չէր դրանք ընկալելու:

– Հայ գրական-քաղաքական մտածողության մեջ Արեւելքից եկող լույսի մասին էլ կային ակնարկներ:

– Մեր ազգի մեծերը, մանավանդ, 20-րդ դարի սկզբի, գիտեին եւ գրել են այդ մասին, որ Արեւելքից է գալու լույսը: 1875 թ.-ին Ելենա Պետրովնա Բալաստսկայան Նյու Յորքում ստեղծել է «Թեոսոֆիական ընկերություն» Արեւելքի ուսուցիչների խորհրդով: Նրա գործունեությունը մեծ ազդեցություն է թողել: Նրա ընկերության կանոնադրության երեք հիմնական խնդիրներն էին համարողականի եղբայրության գաղափարի իրականացում, կրոնների փոխադարձությունների էզոթերիկ գիտությունների, մարդու եւ բնության գաղտնի ուժերի ուսումնասիրություն: Այդ ընկերության գաղափարները հասել էին նաեւ Թիֆլիս: Թումանյանն իր «Վերնատնով» ուսումնասիրում էր այդ երեւույթները, այդ ընկերության գաղափարները:

Այդ ժամանակից սկսած աշխարհով սկսվում է թեոսոֆիական շարժում: Աշխարհի տարբեր երկրների տարբեր ոլորտների մարդիկ երաժիշտներ, գրողներ, նկարիչներ, գյուտարարներ դառնում են հետեւորդներ: Մեր մեծերից Թումանյանը լինելով պայծառատես, հեռագգաց վկայում էր, հաճախ խոսում մարդու եւ բնության գաղտնի ուժերի մասին: Բալաստսկայայի «Գաղտնի վարդապետություն» ուսմունքը ներկայացնում էր գիտության, կրոնի եւ փոխադարձության համադրություն: Այս ուսմունքի հետեւորդները հանդես էին գալիս

կեղծ ուղղությունների, նյութապաշտական գիտության դեմ: Նյութապաշտական գիտությունը փակուղու մեջ էր հայտնվել, ասելով, թե տիեզերքի ամենափոքր մասնիկը ատոմ է, ֆիզիկան իր գործը համարել էր ավարտված, մտում էր վերջին կետադրությունն անել: Բալաստսկայան հանդես է գալիս ասելով, թե մինչեւ 10-րդ տարին դուք ատոմի փոքր մասնիկ եք հայտնաբերելու, ատոմն էլ տրոհվելու է: Իսկ մեր փոխադարձությունն էլ հիմնված է այն գաղափարի վրա, որ ատոմն անսահման տրոհելի է: Նա տալիս էր ճշմարիտ գիտելիքներ: Նրա գրածները հաստատվում են մինչ օրս:

– Ճգնաժամը բոլոր ոլորտներում է: Ինչպես են արձագանքում մտավորականները:

– Հայաստանում անկախացումից սովետի փլուզումից հետո գրականագետ Մերգել Մարիյանը, կրթության նախկին նախարար Էդուարդ Ղազարյանը, Էլի ուրիշներ, գրում էին, որ այս ճգնաժամը միայն մեզ մոտ չի: Մարդկությունը փակուղի է մտել: Իմացության երեք հիմնական ուղիները կրոն, փոխադարձություն, գիտություն, փակուղի են մտել: Դժվար է հույս ունենալ, որ գիտության, կրոնի, փոխադարձության բնագավառից որեւէ մեկը վեր կկենա, կսալի սա է ճանապարհը: Փոխադարձության ինստիտուտի տնօրեն Գեորգ Պողոսյանը մի գիտաժողովում հանդես էր եկել ասելով. «Մարքսիզմ-լենինիզմից» հրաժարվելուց հետո ուրիշ մեթոդաբանություն չունենք»: Հայտնի է, որ այդպիսի խորը ճգնաժամերի ժամանակ հայտնվում է մի նոր Ուսուցիչ, նոր ուսմունք: Հիմա ուսմունքը տրված է:

Բնագավառգիտություն մի շատ հետաքրքիր միտք կա. «Ամեն անգամ, երբ թուլանում է օրենքը, եւ անօրենությունն է իշխում, եւ ինքս ինձ ստեղծում եմ Բնարատա, արդարների փրկության համար, չարագործների կործանելու համար, օրենքը հաստատելու համար: Օրենքը հաստատելու համար ես ծնվում եմ դարեդար»: Վերջապես, պարբերաբար Ուսուցիչների հայտնվելը հայտնի երեւույթ է: Դրա մասին նույնիսկ Թումանյանն ունի թարգմանած Խաքանիի քառյակը. «Ասում են թե հազար տարին մի անգամ, մի փրկիչ է աշխարհ գալիս – մի պատգամ...»: Այդ մասին ժամանակին հայտնի էր Նժդեհին. «Մեծ մարդը դա սպասվելիք օգնություն է, միփթարությունը: Մենք, որ ժամանակների մայրը երբեմն-երբեմն աշխարհ կուղարկի այս կամ այն ժողովրդի եւ, մարդկության համար» եւ այդ հայտնի երեւույթը մենք պետք է հաշվի առնենք: Նոր ուսուցիչը հայտնվել է եւ նոր ուսմունք է տվել, որը գալիս է համադրելու նախկինում տրված կրոնները, փոխադարձությունը, գիտությունը եւ մարդկությանը ճիշտ ճանապարհի ցույց տալու համար: Նախ մարդուն պիտի ուսումնասիրել, մարդու մեջ թաքնված ուժերը, որոնց մասին Թումանյանն էլ է ասում: Նժդեհն էլ է ասել. «Մարդն էն չի, ինչ-որ տեսում էք, մարդու մեջ թաքնված

Երևանն իրականում 6000 տարեկան է

Այս տարի պաշտոնապես նշվելու է Երևանի 2799-ամյակը: Երևանի պատմության թանգարանի հնագիտության և միջնադարյան պատմության բաժնի վարիչ, պատմաբան Անժելա Տերյանը, սակայն, կարծում է, որ իրականում պետք է նշվի Երևանի 6000-ամյակը: Բնակավայր Երևանն իրականում կրկնակի մեծ է պաշտոնապես հայտարարվող տարիքից:

Երևանի իրական տարիքի, առկա գիտական հիմնավորումների և բնակավայրերի տարիքի որոշման մոտեցումների մասին է «Անկախ» գրուցել Անժելա Տերյանի հետ:

– Տիկին Տերյան, Ձեր գիտական հոդվածներում պնդում եք, որ Երևանն ավելի հին բնակավայր է, քան պաշտոնապես ներկայացվում է: Իրականում քանի՞ տարեկան է Երևանը: Եվ ի՞նչ հիմքեր կան այդ պնդումների համար:

– Երևանը 6 հազար տարեկան է: Իսկ փաստերն այնքան շատ են, որ անգամ չգիտեմ՝ որտեղից սկսեմ թվարկել: Կարևոր փաստ է այն, որ այսօրվա Երևանի տարածքում է գտնվում Շենգավիթ բնակավայրը: Կնագիտական պեղումների շնորհիվ պարզվել է, որ այն 6 հազար տարեկան է: Իսկ վերջերս նույնիսկ ենթադրություններ կան, որ ոչ թե 6 հազար, այլ 7 հազար տարեկան է: Այն մշակույթը, որը հայտնաբերվել է Շենգավիթում և կոչվում է Շենգավիթյան կամ կուր-արաքայան մշակույթ, թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակով: Ներկայում կարծիքներ կան, որ դա 5-րդ հազարամյակի մշակույթ է, այդ պարագայում՝ Երևանը 7 հազար տարեկան է: Ամեն դեպքում, եկեք 6 հազար տարեկանի վրա կանգ առնենք և ընդունենք, որ Երևանն իսկապես 6 հազար տարեկան է:

Շենգավիթը Երևանից հեռու չէ, գտնվում է այսօրվա Երևանի կենտրոնական մասում, նրան շրջապատում են այլ հուշարձաններ, որոնք ժամանակին բնակավայրեր են եղել: Օրինակ՝ Կարմիր բլուրը, կայարանամերձ հրապարակը, Ավան-Առինջում ունենք բնակավայր, Կարմիր բերդը Ֆիզիկայի ինստիտուտի հարևանությամբ, այս բոլորը շրջապատում են Շենգավիթը, որ որպես բնակավայր գոյություն է ունեցել 4-րդ հազարամյակում և մոտավորապես երկու հազար տարի շարունակել է իր գոյությունը: Ընդ որում, Շենգավիթը եղել է պարսպապատ բնակավայր, ինչը հուշում է, որ գործ ունենք քաղաքի կամ քաղաքատիպ ավանի հետ: Հետաքրքիր է, որ պարսպի տակ սալապատված ջրանցք է հայտնաբերվել, որտեղից Հրազդան գետի ջուրը բարձրացվել է վերև: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ տեխնիկա է եղել, որ ջուրը ներքից վերև է բարձրացվել: Շենգավիթն ամրացված, գեղեցիկ բնակավայր է եղել, որի բնակիչները զբաղվել են գյուղատնտեսությամբ, խեցեգործությամբ, մետաղագործությամբ: Քաղաքին բնորոշ բոլոր արհեստներն այնտեղ եղել են: Եվ այս բոլորը մենք հայտնաբերում ենք պեղումների ժամանակ:

Պեղումների շնորհիվ բացահայտվել է 4 մշակութային շերտ, որի ստորին հատվածը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակով, իսկ վերին շերտը՝ 2-րդ հազարամյակով: Պեղումները Շենգավիթում սկսվել են 1930-ական թվականներից: Պեղումներն իրականացրել է Շվեդենի Բալթիկոլոյանը, նա էլ Շենգավիթում հայտնաբերված յուրահատուկ խեցեղենն անվանել է Շենգավիթյան խեցեղեն: Նա դրանք թվագրել է որպես մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակի մշակույթ: Սակայն խորհրդային տարիներին, հատկապես՝ 30-ական թվականներին, գիտե՞ք ինչ իրավիճակ է եղել. նրան անմիջապես լռեցրել են, շուտով նաև աքսորել, և Բալթիկոլոյանի մասին այլևս որևէ տեղեկություն չկա:

Այդպես պեղումները սառեցվում են: 50-ականների վերջերին նորից Շենգավիթում պեղումներ են իրականացվում, որոնք շարունակվում են մինչև 60-ականների վերջերս: Այս անգամ հայտնաբերված նյութը վստահորեն 4-րդ հազարամյակով է թվագրվում:

2000-ականներին պեղումները նորից սկսվեցին արդեն Հակոբ Միմնյանի գլխավորությամբ: Ներկայումս այստեղ հայտնաբերված նյութն արդեն թվագրվում է 5-րդ հազարամյակով:

Ահա այսպիսի հնության բնակավայր ունենալով հանդերձ՝ այդ փաստերը մի կողմ ենք դնում ու փորձում ենք նշել Երևանի 2800-ամյակը:

– Իսկ որտեղի՞ց է գալիս այդ մոտեցումը, ըստ որի՝ այս տարի նշելու ենք Երևանի 2799-ամյակը:

– Խորհրդային տարիներին ամեն ինչ որոշում էր Մոսկվան: 1950-ականներին Էրեբունիում՝ Արին-Բերդում, հայտնաբերվում է Արգիշտի Առաջինի հանրահայտ արձանագրությունը, որում ասում է, որ ինքն ամայի տարածքում հիմնել է բերդ և այն կոչել Էրեբունի: Սա փաստ էր, որի դեմ խոսել չէին կարող: Միևնույն Շենգավիթի պարագայում մշակույթ է, այն կարող են 1000 տարի հետ գցել: Եվ իմանալով, որ Երևանն իրականում շատ ավելի հին է, քան Արգիշտի



Առաջինի արձանագրությունն է, 1968 թվականին որոշում են թույլ տալ, որ հայությունը տոնի քաղաքի 2750-ամյակը:

– Իսկ անկախացումից հետո մոտեցումն ինչո՞ւ չփոխվեց:

– Ոնց որ ասեք, թե ինչու Ուրարտուն Հայաստան չդարձավ, ինչու է Հայոց պատմությունը սկսվում առաջին հազարամյակի կեսերից: Որովհետև նույն մարդիկ են, նույն մասնագետները, նույն պատմաբանները, որոնք շարունակում են աշխատել նաև այսօր: Նրանք ինչպե՞ս կարող են հետ կանգնել իրենց ասածներից: Շատ-շատ նոր սերնդի մարդիկ, որոնք կապ չունեն զրանտների հետ, կբարձրաձայնեն այդ մասին, ինչը և անում են: Հշմարտությունը պետք է հաղթի, այսպես այլևս չի կարող շարունակվել:

– Տիկին Տերյան, իսկ բնակավայրերի տարիքը որոշելու ի՞նչ գիտական մոտեցումներ կան:

– Հնագույն քաղաքների տարիքը սովորաբար հայտնաբերված մշակույթով է որոշվում: Միջագետքի Ուր, Ուրուկ, Էրեբու, Նինվե քաղաքները, շնորհիվ հայտնաբերված հնագիտական նյութի, մոտավորապես 6 հազար տարեկան են հաշվարկվում: Հետաքրքիրը դա է, որ Երևանում հայտնաբերված 6000-ամյա գիտական նյութը մի կողմ են դնում և ասում, որ Երևանը 2800 տարեկան է: Երբ մատնանում ես, ասում են Շենգավիթը Էրեբունին չէ:

Այդ դեպքում Երևանը թող որպես բնակավայր ներկայացվի, որ 6 հազար տարեկան է, իսկ արդեն Արգիշտի Առաջինի հիմնած բերդը 2800 տարեկան:

– Խոսքը նույն բնակավայրի մասին է, Շենգավիթն ու Արգիշտիի հիմնածը միմյանց շարունակող բնակավայրե՞ր են եղել:

– Շենգավիթն իր գոյությունն անսպասելիորեն դադարեցրել է 2-րդ հազարամյակում: Քաղաքի պարսպից դուրս դամբարանադաշտ է բացահատվել, որտեղի գանգերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ արմենոիդ մարդաբանական տիպին են պատկանել: Իսկ դրանից հետո հայտնաբերված մշակութային արժեքները նորից արմենոիդ մարդաբանական տիպի ստեղծածն են: Այս դեպքում ինչպե՞ս կարելի է ասել, որ սա ուրիշ մշակույթ է, մեզ հետ կապ չունի: Նույն մշակույթն է, նույն ժողովուրդը: Բնակչությունն անհայտ պատճառով Շենգավիթից հեռացել է, բայց հեռու չի գնացել, հիմնվել են Կարմիր բերդում, կայարանամերձ հրապարակի տարածքում, Ավանում, այսինքն մի փոքր հեռացել են և նոր բնակավայր հիմնել: Եվ Արգիշտին, որին տարածքում ամրություն էր պետք, Երևանի բլուրներից մեկի վրա, որն ամայի է եղել, ստեղծել է բերդը: Բայց ողջ տարածքը հո ամայի չի եղել:

Ես Երևանի փոխարեն շատ եմ վիրավորվում, երբ ասում են, որ այն 2800 տարեկան է: Երևանն իրականում 6000 տարեկան է, եկեք այդպես էլ ասենք:

Անվան խնդիրն էլ հետաքրքիր է: Շենգավիթը չգիտենք, թե ինչպես է կոչվել: Բայց նրան տարեկից քաղաքներից մեկը Միջագետքում կոչվել է Էրեբու: Այն Արրատայից գնացած մարդիկ են հիմնել: Այսինքն Էրեբու, Էրեբու նույն բանն են մի փոքր հնչյունափոխությամբ: Արգիշտին, ենթադրաբար, նորակառույց բերդը կոչել է հարևանությամբ գոյություն ունեցող բնակավայրի անունով: Ասում են Էրեբունի բացը հաղթանակ է նշանակել: Այդքան քաղաքներ է հիմնել, ինչու ոչ մեկն Էրեբունի չի կոչել: Այն ժամանակ քաղաքները հիմնականում կոչվել են արքայի և աստվածների անուններով: Այս դեպքում

Մեր հյուրն է պատմաբան Գուրգեն Կարապետյանը

Հայերը և նրանց դերը աշխարհում պետությունների կառավարման նոր մոդելի ստեղծման հարցում



– **Պարոն Կարապետյան, ձեր տեսանկյունից այսօր ինչպիսի՞ն է մեր երկրի ներքաղաքական իրավիճակը:**

– Ե վ աշխարհում, և մասնավորապես Հայաստանում ոչ թե ճգնաժամային, այլ արդեն օրհասական վիճակ է:

Բնակչության մի գերակշիռ մասը, հատկապես երիտասարդությունը, իսկ ես շփվում եմ վերջիններիս հետ, գիտեն այնպիսին է իրավիճակը, որ կարող ենք և դադարել գոյություն ունենալ: Բայց միաժամանակ ոչ ոք չգիտի, թե ինչ անի:

Եթե մի երկու տարի առաջ ասում էին՝ երկրից փախչելը կփրկի, ապա հիմա տեսնում են, որ դրսում մեր գլխին կախված է ասրափելի մեծ վտանգ:

Շվեդիայում մի քանի տարի առաջ մի հայ մետրոյում կարողալիս է եղել իմ «Հայոց պատմության ուրվագծերը» գիրքը, որի կազմի վրա է ութաթիս աստղը՝ ավաստիկայով: Այս մարդուն դատի են տվել: Մի կերպ հայ փաստաբանն ապացուցել էր, որ սրանք երրորդ հազարամյակի նշաններ են և կապ չունեն ֆաշիզմի հետ: Հատարանն էլ որոշել էր, որ այդ մարդն իրավունք չունի այս գիրքը իր կազմով, հասարակական վայրերում բռնել ձեռքը:

Իսկ այսօր Ադոլֆ Հիտլերի «Բմ պայքարը» աշխատությունը տպվում է մեծամեծ տիրաժմերով: Այսինքն ինչ-որ մարդիկ ցանկանում են ֆաշիզմը տարածել Եվրոպայով մեկ: Մյուս կողմից էլ եվրոպան լցնում են փախստականներով: Ապա, իրական ազգայնականության դեմ պատեն՝ ստեղծելու համար ստեղծում են ազգայնամոլական գաղափարախոսությունը: Իսկ այս ամենի վերջն ինչ է լինելու. բնականաբար բախում փախստականների ու գյուխ բարձրացնող ազգայնամոլների միջև: Եվ առաջին հարվածն ունի է համաներու. Հայերի ն:

– **Այդ ինչո՞ւ:**

– Որովհետև ողջ պատմության մեջ այդպես է եղել. ձեռքի հետ մի հատ էլ հայերին են ջարդում:

Երբ մենք սովետական բանակում էինք, ռուսները հայերիս ասում էին «արա»: Որովհետև մեր ամեն խոսքի մեջ երկրորդ բառն արան էր: Իսկ հիմա հայերին ասում են «խաչ»: Այսինքն ազգայնամոլական ռուսներին ինչ-որ մեկն ուղղորդում է հայերի դեմ, որպես իրենց համար ամենավտանգավոր տարրի:

– **Խաչի մեջ ի՞նչ վատ բան կա. իրենք էլ են խաչապաշտ:**

60

Էրեբունի է անվանել, որովհետև հարևանությամբ նման անունով բնակավայր է գոյություն ունեցել: Տրամաբանության հարց է:

– **Եթե պաշտոնապես ընդունվի, որ Երևանը 6000 տարեկան է, ի՞նչ ունենք առաջարկելու զբոսաշրջիկներին ու Երևանի պատմությամբ հետաքրքրվողներին:**

– Ունենք Շենգավիթ բնակավայրը, որը հրաշալի կլինի, եթե վերականգնվի: Վերջերս վարչապետն ու Երևանի քաղաքապետն այցելել են Էրեբունի և Շենգավիթ, դրանք որպես հուշարձաններ ներկայացնելու հետաքրքիր ծրագրեր կան: Շատ ուրախ եմ, որ

– Նրանք չգիտեն այդ բառի իմաստը: Պարզապես նրանց համար խաչը հայն է, և հայը վատն է: Այսինքն ուղղորդող այդ ուժերը ստեղծում են նման իմիջ հայի համար:

Նույնն էլ սպասվում է այլ երկրներում: Որովհետև այդ ուժերը ոչինչ պատահական չեն անում:

– **Իսկ ի՞նչ է կատարվում այստեղ՝ Հայաստանում:**

– Մեր երկրում կազմակերպված ձևով արհեստական խնդիրներ են առաջ նետվում: Տեսեք՝ բերեցին ռուսներն լեզվի դասավանդման հարցը, հիմա էլ ընտանեկան բնությունների օրենքն են մեջտեղ բերել: Փաստորեն հասարակության ակտիվ մասին քաշում են իբրև թե պայքարի մեջ: Բայց քանի որ չկա որևէ ուժ, որը գիտական հիմքերի վրա ներկայացնի մեր պրոբլեմները, ապա այս ամենը ունենում է հակառակ էֆեկտ:

Երբ մեր ընդդիմադիրները տասը օրը մեկ նշում են, թե կա գաղտնի համաձայնություն Ղարաբաղի յոթը շրջանները Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ, արդեն իսկ նրանք ժողովրդին նախապատրաստում են այդ գաղափարին: Գուցե և իրենք էլ չգիտակցելով, Բայց այդպես են անում:

Կամ բնակչության բաժանել են ռուսամետների, ռուսատյացների, արևմտամետների ու արևմտատյացների: Չհասկանալով, որ և Ռուսաստանը, և արևմտյան աշխարհը կառավարվում են նույն կենտրոնից:

Արդեն բացահայտ խոսվում է այն մասին, որ Ուկրաինայից յոթը շրջան պետք է հանձնվի հրեաներին՝ Օդեսայով, մինչև Մոսկով: Նաև Ռուսաստանից այդ նպատակով տարածքներ պետք է հատկացվեն: Կամ 40 հազար հրեա է գալու, որպեսզի Ղրիմում բնակություն հաստատեն: Եվ այլն, և այլն: Եվ այս ամենը արվում է միևնույն կենտրոնից:

– **Իսկ սրա հետ ի՞նչ կապ ունի Ռուսաստանի քաղաքական դեկալարությունը:**

– Ռուսաստանը, որպես ռուս էթնոսի հայրենիք, արդեն ավելի քան 300 տարի գոյություն չունի: Ռումանովները Ռեչ Պոսպոլիտայի ժամանակ ընդամենը հրեական տոհմ էր՝ Կապիլա ազգանունով, և որոնց կապեցին Ռուսաստանի վզին: Պատահական չէր, որ Պետրոս Առաջինի հայրը և ինքը՝ Պետրոսը 800 հազարից մինչև 1 մլն 200 հազար ռուս են կոտորել: Ոչնչացրեցին ռուսական մշակույթը, ազգային արժեքներ կրող մարդկանց վերացրեցին: Արդյունքում ռուսական վերնախավը, որևէ հոգևոր կապ չունենալով ռուսի հետ, նրան պահել է որպես ստրուկ: Նրանք եղել են տիպիկ արևմտականներ՝ Ռուսաստանը որպես սպիտակ ստրուկների երկրի վերածող ուժ:

– **Բայց Պուտինի դեկալարությամբ՝ ռուսական վերնախավն առճակատվում է արևմտյան հետ:**

– Ի՞նչ հարցում է առճակատվում: Արևմտյանը այլասերվածությունն ավելի քիչ է քան բերում իրենց մոտ: Ռոդչիլդի կապիտալը չէ, որ իշխում է Ռուսաստանում. արդեն ողջ նավթն ու գազը նրա սեփականությունն են: Կամ չինացիները չեն տեղ ու տնօրինություն անում Հեռավոր Արևելքում ու Սիբիրում: Չի թալանվում երկիրը: Խոշոր քաղաքներից մի 20 կիլոմետր հեռավորում ես, արդեն երկիր չկա: Միայն վերջին 15 տարիներին Ռուսաստանում ոչնչացվել է 330

38

հատկապես Շենգավիթ են այցելել, որովհետև այն ցույց է տալիս Երևանի իրական տարիքը: Հույս ունեմ, որ մեր քաղաքական այրերը պատասխանատվություն կստանան տոնելու Երևանի ոչ թե 2800-ամյակը, այլ 6000-ամյակը: Ի վերջո, մեկը պե տք է կոտրի այս սառույցը:

– **Իսկ Երևանի տարիքի հետ կապված տեսակետը միջազգային գիտական շրջանակների կողմից կարո՞ղ է ընդունվել: Դա իրատեսական է:**

– Իսկ ինչն է ոչ: Մենք նյութն ունենք:

Հայկուհի ԲԱՐՍԵՂՅԱՆ

հազար բնակավայր:

– Ելքը...

– Ես, ես մի քանի մարդիկ, տասնհինգ տարի շարունակ առանձին–առանձին, սակայն վերջին չորս տարին միասին, մշակել ենք հասարակական բնույթի տիեզերական համաերկրային օրենքներ: Ցանկացած խնդիր, երբ դուստ էս այս օրենքների մեջ, պարզվում է էությունը, նաև որոշակի ձևով երևում է, թե ինչ լուծում կարող է այն ստանալ:

Մենք չենք ասում, որ մեր հայտնագործած օրենքները կատարյալ են: Հայտնագործած, հնարած՝ չէ: Մենք ասում ենք ուլքեր լողորեն մտածելու ունակ և ուլքեր ցավում են այս երկրի համար, թող գան ու միասին դիտարկենք այդ օրենքները: Նրանք կարող են լինել մի քանի տասնյակ մարդիկ ընդամենը: Պետք է հասկանանք մի պարզ ճշմարտություն՝ պետությունների այս մոդելը, որը փաթաթված է ողջ աշխարհի վրա, արդեն սպառել է իրեն:

Իսկ հայոց պատմությունը կառավարման նոր մոդելի ստեղծման հնարավորություն տալիս է: Իհարկե, այն պատմությունը, որն իրականում կա, և ոչ այն, ինչը հրամցրել են մեզ: Քչերը գիտեն, որ Հայաստանի տարածքում գտնվել են 11–5–րդ հազարամյակների բնակավայրեր, որոնց ուսումնասիրողները տեղի կառավարման կարգն անվանել են նախնադարյան կոմունիզմ: Այսինքն գոյություն է ունեցել մի հասարակարգ, որտեղ չի եղել պետականության ներկայի կոշտ մոդելը: Եվ մարդկանց կյանքի միջին տևողությունը եղել է 60–65 տարի: Իսկ նման ցուցանիշի եվրոպան հասել է ընդամենը 19–րդ դարի կեսերին:

Նաև պետք է հասկանանք, որ Մովսեսական Միությունում սոցիա-

լիզմ չի եղել, այլ եղել է ընդամենը պետական կապիտալիզմ:

Ինչպես եղավ Իսլանդիայում. 2008 թվականի ճգնաժամի ժամանակ այն աշխարհում ամենամեծ պարտքեր ունեցող երկիրն էր: Այստեղ տեղի ունեցավ խաղաղ հեղափոխություն, ձեռքարկվեցին բանկի աշխատողների, ուլքեր թալանում էին երկիրը: Չնայած Անգլիան ու Նոլանդիան սկսեցին տնտեսական սանկցիաներ կիրառել, բայց Իսլանդիան գնաց իր ճանապարհով: Երկրում այլևս չկան բանկեր այդ պարագիտ համակարգը վերացավ: Եվ այն արդեն տնտեսապես ամենաարագ զարգացող երկիրն է աշխարհում:


– Ասում եք՝ մի քանի մարդիկ եք, որ աշխատում եք այս ուղղությամբ: Միայն հայեր եք: Իսկ այլազգիների մասնակցությունը չկա:

– Համաերկրային, համատիեզերական օրենքներից բխեցվում է նաև, թե աշխարհում ինչպիսի ապագա քաղաքական քարտեզ է լի: Նեյլո: Ուստի մեզ հետ բանակցում ու գործակցում են և ռուսները, և պարսիկները, նորվեգացիներն են ակտիվորեն հետաքրքրվում մեր տեսակետներով:


Եվ ես պնդում եմ՝ եթե մի քանի տասնյակ գիտակից հայերով կարողանանք այդ օրենքները մշակել (չեմ ասում, թե դրանք վերջնական ու կատարյալ են լինելու), ապա մեր ընդհանուր էներգետիկ դաշտը կտարածվի ամբողջ հայության վրա: Իսկ այսօր Հայաստանի ինֆորմացիոն դաշտերը SOS են կանչում ողջ հայության համար: Որովհետև զգում են, որ Հայաստանում այնքան է պակասում բարոյապետ մարդու հայերի քանակը, որ իրենք ևս էներգիա չեն ստանում: Հետևաբար՝ վտանգվում են նաև ողջ աշխարհի հայերը:

Գոհար ՍԱՐԴԱՐՅԱՆ
«Փաստ» օրաթերթ

Հայկական առաջին թղթադրամները



Հայաստանի առաջին Հանրապետության թղթադրամները թվագրված են 1919 թվականով և թողարկվել են 50, 100 և 250 ռուբլի անվանական արժեքներով: Թղթադրամների ընդհանուր զեղարվեստական գաղափարի և ձևանմուշների պատրաստման հեղինակն էր նկարիչ Արշակ Ֆեթվաճյանը: Թողարկված թղթադրամները շրջանառության մեջ են դրվել 1920 թվականի հունիսին, որն այն ժամանակ մեծ քաղաքական իրադարձություն է համարվել



Հայաստանում՝ նորանկախ երկրի ինքնիշխան լինելու կամքը վերահաստատելու առումով:

Այդ թղթադրամների թողարկումը տարբերվում է 1918–1924 թթ. Անդրկովկասի տարածաշրջանում իրականացված այլ թողարկումներից իր նրբագեղությամբ ու տպագրության բարձր որակով: Ձևավորման մեջ օգտագործվել են ազգային պատկերներ ու նախշեր, կա Արարատ լեռան պատկերը, սուրը ձեռքին արծիվի պատկեր, որը հարվածում է օձին, ինչպես նաև ճախարակով նստած հայուհու արդեն հանրահայտ խորհրդանիշ դարձած պատկերը: Հիմնական մակագրությունները հայերեն են, սակայն մասամբ կան նաև ռուսերենով և ֆրանսերենով:

Հայկական առաջին թղթադրամների տպագրության գործընթացը սկսվեց ֆինանսների նախարար Գրիգոր Զաղեթյանի պաշտոնավարման օրոք՝ հենց նրա և վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի ստորագրություններն են դրոշմված այդ թղթադրամների վրա: Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում կայացրեց հայկական դրամանիշերը տպագրել Անգլիայում, եւ այդ գործը վստահեց լոնդոնյան հռչակավոր «Waterlow and Sons Ltd» ընկերությանը: Թղթադրամների տպագրման կապակցությամբ Լոնդոն գործուղվեց Արշակ Ֆեթվաճյանը տեղում տպագրման գործընթացին ներկա լինելու համար: Քանի որ տպագրության պահանջներից ելնելով դրամանիշերի ձևավորումը որոշակի



ԵՐԲ ՍԱՅԼԱԿԻՑ ԻԶՆԵԼ ԵՎ ՔԱՅԼԵԼԸ ՇԱՏԵՐԻՆ ՉԵՔԻՎԱԹ Է ԹՎՈՒՄ

Օրեր առաջ Երուսաղեմի Սուրբ Հարության Տաճարում Քրիստոսի Սուրբ Գերեզմանում հրաշք տեղի ունեցավ, որին չանդրադառնալն իսկապես մեղք կլիներ: Որոշեցի հանդիպել Էրիկ Ռևագովին, ում հետ կատարվել էր Աստվածային հրաշքը և փոքրիկ հարցազրույց անել նրա հետ:

Երեկոյան ժամերգությունից առաջ Էրիկն իր ուղևորվ Սուրբ Հարության Տաճարի Հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցու աստիճաններից իջնելով՝ մոտեցավ ինձ ու բարևելուց հետո ողջագուրվեց: Զարմացա, քանի որ ծանոթներ չէինք: Ժամերգության ողջ ընթացքում Էրիկը ծունկի եկած աղոթում էր, ձեռքերը երկինք կարկառած փառք տալիս Աստծուն: Ժամերգությունից հետո ասացի, որ ցանկանում եմ փոքրիկ հարցազրույց անել իր հետ՝ կատարված հրաշքի և մինչ այդ տեղի ունեցած վթարի մասին:

Էրիկն անհանգիստ շարժումով ասաց, որ չի ցանկանում խոսել, բարձրաձայնել կատարվածի մասին, սակայն մի փոքր համոզվուց հետո տեղի տվեց խնդրանքիս:

Զրույցի սկզբում նախ հետաքրքրվեց թե ինչ է անունս, ապա փորձեց արտաբերել Ներսես անունը, սակայն ինչպես շատերի նրա մոտ ևս Ներսեհը վերածվեց Ներսեսի: Ապա ներողություն խնդրեց, ասելով՝ որ ռուսական դպրոց է ավարտել ու հավելեց, թե հոգով սրտով հայ է, քանի որ ծնողները հայեր են:

Ես փորձեցի նախ հասկանալ պատմությունը.

– Էրիկ, – ասացի, – գիտեմ որ վթարի եք ենթարկվել, որի հետևանքով հայտնվել եք սայլակին:

Առանց ավելորդ փութոտության, ներքին հանգստությամբ ու մեղմ ձայնով սկսեց պատմել.

– «2012 թվականին Ռուսաստանում վթարի ենթարկվեցի, որի հետևանքով մեքենան շրջվեց: Մեքենայից մի կերպ ինձ դուրս բերելուց հետո պարզվեց, որ ողնաշարիս տասերկու երրորդ ողը կոտրված է: Ապա Կրաստանում բժշկների աջակցությամբ աշխատանքի ընդհիվ, 33 օր անշարժ պառկելուց հետո, շուրջի կանգնեցի: Բժշկները հորդորեցին զգույշ լինել, ուժ չգործադրել և արգելեցին երկու կիլոգրամից ավելի ծանրություն բարձրացնել:

Բոլորս էլ գիտենք, – ասում է, – որ տղամարդը երբ ընտանիք ունի, չի կարող ոտքը ոտքին գցել, մատը մատին չխփել ու ոչինչ չանելով բարեկեցիկ ապրել: Ու ես, իմ մասին հոգ չտանելով, հինգ տարի շարունակ ողնաշարս կոպիտ ասած տեղերի ենթարկեցի: Օգոստոսի 4-ին, մոտավորապես առավոտյան ժամը չորսին, պատուհանի մոտ կանգնած նայում էի դուրս, հանկարծ սարսափելի ցավ զգացի ողնաշարիս հատվածում՝ նման ատամնացավի, որ ուղեղի զգացնել է տալիս: Դրանից հետո հայտնվեցի անկողնում: Չէի քայլում, ուժ չէի կարողանում տալ, բայց միշտ երագում էի դրա մասին», – պատմում է անասելի խանդավառությամբ, ապա նշում, որ երբ հեռուստատեսությամբ տե-



սել է Զատիկի Լույսի արարողությունը, միշտ ներքին ցանկություն է ունեցել գալ Երուսաղեմ ու մի գիշեր անցկացնել Սուրբ Հարության Տաճարում՝ մասնակցել հայոց պատարագին:

– «Չոկտեմբերի 25-ին եկանք Երուսաղեմ, Սուրբ Հարության Տաճար մոմ վառելու: Այդ օրը տաճարը լի էր ուխտավորներով, զբոսաշրջիկներով, այնքան շատ էր բազմությունը, ասես Զատիկի Լույսի արարողությունը լիներ: Ես շատ էի ուզում մերոնց տեսնել, – ասում է, – դե՛ հայերին էլ»:

– Էրիկ, իսկ ո՞վ էր Ձեզ Տաճար բերել, քանի որ չէիք կարող ինքներդ գալ:

– «Դե՛ բնականաբար ես չէի կարող գալ, կնոջս տղան էր բերել»:

Զարմանում եմ «կնոջս տղան» արտահայտությունից ու հարցնում.

– Ամուսնացած ե՞ք:

– «Այո, երկրորդ կնոջս տղան է, մի աղջիկ էլ երկրորդ կնոջից ունեցա, – ժպտում է, – Գրետա ու, հիմա Թիֆլիսում է՝ մորս, հորս մոտ»:

– Աստված պահի:

– «Ապրե՛ք, սա՛ղ ըլնեք», – ասում է բարբառային առոգանությամբ:

Իմ հարցին թե այժմ որտեղ է բնակվում՝ ասաց.

– «Թե՛ Ավիվում, բայց ընտանիքս Թիֆլիսում է»:

– Իսկ այստեղ մենակ ե՞ք ապրում, Ձեզ ո՞վ է խնամում:

– «Երկրորդ կինս, որ կես վրացի, կես հրեա է, միասին ենք եկել Երուսաղեմ, իրենք ինձ բերեցին ու ես աչքերով ման էի գալիս ու մտածում «Տե՛ր Աստված գոնե մեկն ու մեկին մեր հայերից տեսնեմ»: Ճիշտ է, ես հայերեն տառերը չգիտեմ, գրե՛կ-կարդալ չգիտեմ, բայց երբ տեսնում եմ, հասկանում եմ, որ դրանք հայկական տառեր են:

Սայլակի վրա նստած ներսում մի քանիսի հարցրեցի. «Հայ ե՞ք», պատասխանում են. «Չե՛մ Բուսինիա», ասում եմ «Լավ»:

– Էրի՛կ, ժողովուրդը շատ է, արի դուրս գնանք, – ասում են ինձ:

Չէի ուզում, հոգիս տրորվում էր, ուզում էի մեկն ու մեկին անպայման գտնել: Ասացի «Լավ, կամքը թող քոնը լինի»:

Դուրս եկանք: Գավիթում՝ ձախ կողմում՝ փոքր եկեղեցի կա (Հայոց Սուրբ Չովհաննես մատուռի մասին է խոսում), տեսա դուռը կիսաբաց է ու դռան վրա բանալիներ են կախված: Մտածեցի անհնար է, որ այնտեղ ներսում մեր հայերից մեկը չլինի: Ասացի ինձ տարեք էստեղ: Ասաց. «Էնտեղ ոչ մի բան չկա»: Ասացի. «Բավ է, տա՛ր էստեղ»:

Մտեցանք դռանը՝ հրեցի ու ասացի. «Բարև Ձեզ», ներսից հայերենով պատասխանեցին. «Բարև Ձեզ»: Դա ինձ համար մի լիություն էր:

Ասացի. «Կարելի՞ է ներս գալ», ասաց. «Այո՛, նե՛րս արի» և դուռը բացեց: Ինձ սայլակից գետին դրեցին, ես ծնկաչոք մտա ներս:

Ինձ բարևող Սուրբ Հարության Տաճարի Լուսավորի Տիրացու Գեղամ Անջունյանն էր, որ անմիջապես հարցրեց արդյոք ներսում եղե՞լ ենք:

Ասացի. «Չե՛, ներսում այնքան ժողովուրդ կար չկարողացանք Սուրբ Գերեզման մըտնել, արդեն գնում էինք» (խաչակնքվում է ու ասում «Փառք Քեզ Տե՛ր Աստված»):

Գեղամս ասաց, որ քիչ հետո կօգնեն ինձ ու ներս Գերեզման կմտնեն:

Ուրախությունից տեղս չէի կարողանում գտնել: Նորից Տաճարից ներս մտանք ու մեզ տարան նախ հայոց Տեսչարան, ու ասացին, որ մի քիչ սպասենք, քանի որ հաջորդ օրվա տոնի նախապատրաստություններն էին կատարում, հետո պիտի փորձեին ինձ ներս Գերեզման մտցնել:

Մինչ Գեղամը Տեսչարանից դուրս կգար, ասացի «Գեղամ ջան, մի հարց տամ էլի», ասաց. «Ի՛նչ է եղել, ասա »:

«Գիտե՛ս ներքին ցանկություն ունեմ գիշերը Տաճարում անցկացնելու»:

Ասաց. «Ոչ մի խնդիր չկա»:

Վառասառառայ, Հա յր Մուրբ..., (դարձյալ խաչակնքվում է), – Մենեմ Մուրբ գորություն, Տե ր Աստված:

Հետո Գեղամա ասաց. «Էրի՛կ, արի՛ եսպես անենք, երբ որ գաս գիշերը Տաճարում մնալու, այդ ժամանակ էլ կմտնես Գերեզման ու քեզ խանգարող չի լինի: Հիմա արագ պիտի մտնես ու դուրս գաս»:

Համաձայնեցի ու մենք գնացինք Թել Ավիլ: Դրանից տաս օր հետո, Երուսաղեմ գալուց առաջ զանգեցի ու պայմանավորվեցի Գեղամի հետ, որ ուրբաթ օրը՝ նոյեմբերի 3-ին պիտի գամ ու գիշերը մնամ Մուրբ Հարություն Տաճարում: Ամսի 3-ին, երեկոյան մենք եկանք: Քանի որ Տաճարի դուռը պիտի փակվեր ժամը 7-ին մենք 6:30 արդեն Տաճարի մուտքի մոտ էինք:

Դռան փակվելուց հետո Տաճարի այդ օրվա հերթապահ ծառայող միաբաններ Մկրտիչ Ստեփանյանն ու Կարապետ Մարկավազ Բաղդասարյանը ինձ սայլակով հասցրեցին մինչև Քրիստոսի Գերեզմանի մուտքին ու այնտեղից ես ծնկաչոք, կարելի է ասել սողալով մտա ներս: Թե որքան եմ ներսում մնացել, չեմ կարող ասել, բայց ներսում այնքան հանգստություն ու լուրջություն էր տիրում, որ երկար եմ մնացել: Մեղա եմ քեզ Տե ր Աստված, – ասում է, – ես կարգին աղոթք անել էլ չգիտեմ: Իմ հոգով, իմ զգացածով ինչպես կարողացա հաղորդակցվեցի իմ Աստծու հետ:

Հետո դարձյալ ծնկաչոք փորձեցի դուրս գալ, այդ ժամանակ մի ինչ-որ բոց էի զգում կրծքավանդակիս շրջանում, ինչ-որ տաքություն շատ ուժեղ: Դուրս եկա տեսա տղաները չկային՝ կանթեղների ձեռքն էին ավելացնում: Մի քիչ բարձր ձայնով, ոչ շատ կոպիտ, բայց համեմատաբար ուժեղ գոռացի. «Մուկուտ տո՛ւ»: Ու հեռվից տեսան ինձ: Մինչև կմոտենային, ես շապիկիս կոճակները արձակեցի, քանի որ ներսս այրվում էր:

Տղաները որ եկան ասացի. «Օգնեք ինձ»: Ուզում էին սայլակը մոտեցնել, որ նստեմ, ասացի. «Չե՛մ ուզում սայլակը, օգնե՛ք ոտքի կանգնեմ, կանգնել եմ ուզում»:


Տղաները կրացան, մի ձեռքով հենվեցի Կարապետի ուսին, մյուս ձեռքով Մկրտիչի, ու ասեցի. «Ինձ բարձրացե՛ք»: Երբ բարձրացրին, ոտքերս սկսեց դողալ:

– Բայց ի՛նչ ուժ էր, որ չտիպեց Ձեզ կանգնել ցանկանաք: Որտեղից առաջացավ այդ ցանկությունը:

– «Չգիտեմ մեջս ինչ էր կատարվում, էն տաքությունը, եմ այրվելը՝ անկախ ինձնից ինչ-որ ցանկություն ունեցա ոտքի կանգնելու: Այնպիսի տպավորություն էր, կարծես ես չէի ղեկավարում ինձ, այլ անում էի այն ինչ ներսս էր թելադրում: Երբ բարձրացրեցին ինձ, այդ պահին ուզում էի բոլավել, բայց նաև հասկանում էի թե ուր եմ գտնվում ու փորձեցի զսպել էմոցիաներս: Ասեցի. «Եկեք մի քիչ քայլենք»: Ու քայլեցինք, դրանից հետո սայլակին մոտ չեմ գնացել:

– Իսկապես հրաշք է: Մինչև Տաճար գալը երազանք ունեցել էի:

– «Երազանքս Տաճարում գիշերային արարողություններին մասնակցելն էր, այստեղ մնալն էր: Բայց Տաճարում գիշերելու ցանկու-



թյունս իմ վիճակից չէր գալիս, այլ այն, որ մորս պապիկը, այսինքն մորս մոր հայրը, որ անունը Հայկարամ Տեր-Միքայելյան էր, 1800-ականներին հաջի է եղել: Այդ բոլորը ես փորք ժամանակ լսել եմ ու առաջին անգամ, երբ 33 տարեկանում Իսրայել եկա, հետաքրքրվեցի՝ մտածելով, որ գուցե ինչ որ տեղեկություն կկարողանամ գտնել նրա մասին Երուսաղեմի արխիվներում կամ տունարներում:

Դե ինչ ասեմ Հայր Մուրբ ջան, Աստված տվեց ինձ այն ինչ ուզում էի: Ուզում էի գիշերել տաճարում, Աստված տվեց: Դա ինձ համար ամեն ինչ է:

– Վրայից հետո երբեք չե՛ք մեղադրել Աստծուն, չե՛ք ասել ինչո՞ւ այսպես եղավ, ինչո՞ւ հենց ինձ հետ եղավ:

– «Ոչ, քանի որ մայրս հավատացալ է, ու տաս և ավելի տարիներ արդեն ուխտերի է գնում տարբեր եկեղեցիներ: Պապիկս Վանիկը ևս հավատացալ էր: Առավոտյան վաղ արթնանում էր, առանց որե՛կ մեկի հետ խոսելու, առանց մի կտոր հաց ուտելու ուխտի էր գնում Թիֆլիսի տարբեր եկեղեցիներ: Ձեռնափայտ ուներ ու դրանով կանաց-կամաց գնում էր իր ուխտը կատարելու: Երեկոյան վերադառնում էր, նոր հաց էր ուտում»:

– Բայց Դուք չե՛ք մեղադրել Աստծուն, քանի որ նման իրավիճակներում հայտնվող մարդիկ, ում հետ դժբախտություն է կատարվում կամ ծանր հիվանդություն են ունենում, մեղադրում են Աստծուն՝ ասելով թե ինչո՞ւ հենց մեզ հետ սա պատահեց, ինչո՞ւ հենց ես և այլն: Դուք նման բաներ չե՛ք ասել:

– «Ոչ, մտքովս էլ չի անցել: Ես հոգևոր կյանքով չեմ ապրել, բայց ես գիտեի որ այն ինչ ինձ հետ պատահեց իմ մեղքով պատահեց: Ես իմ կյանքը չէի գնահատում, այնպիսի իրավիճակում էի հայտնվել, որ կյանքիցս ձեռք էի քաշել ու կարծես թե մահս էի փնտրում, (նորից ասում է «Մեղա Քեզ Տե ր Աստված»)»:

– Մարդ երբ ինչ-որ անմտաձված քայլ է անում ու հայտնվում է անելանելի վիճակում, զոջում է, բայց արդեն ուշ է լինում: Աստված մեզ ինչ է տվել, պետք է գործածենք ինչ-որ բան անելուց առաջ: Անմտաձված քայլերի վերջը դա է: Ինձ հետ կատարվածի համար ես երբեք Աստծուն չեմ մեղադրել, գիտեի որ իմ մեղքով է եղել, այլ մեղավորներ չեմ փնտրել»:

– Մի խոսք կար որ ասում են. «Չեմ կարող չկա, չեմ ուզում կա»:

– «Կարող է չհավատաք, բայց մտքովս չի

անցել, որ քայլելու մասին խնդրեմ Աստծուն: Ես Գերեզման մտնելով մեղքերիս թողության համար էի աղոթում, ոչ թե ոտքի կանգնելու, ոչ թե քայլելու: Ես դրա մասին անգամ խոսք չեմ ասել ներսում, – ասում է ու հավելում, – ամբողջ մարմինս փշաքաղվեց:

Մայրս քանի տարի ասում էր. «Այ բալա, դու չես պատկերացնում թե ինչ բան է Աստծու սերը»: Նա միշտ ինձ ուղղորդում էր դեպի Աստված, բայց քանի որ ես սխալ կյանքով էի ապրում՝ ասում էի. «Մամ ջան, ես պատրաստ չեմ, ես չեմ կարող»:

Բայց այն գիշերվանից հետո, ինչ որ կատարվեց Տաճարում ինձ հետ, կյանքս փոխվեց: Ես չկարողացա էլ Տաճարից դուրս գալ: Արդեն հինգ օր է Տաճարում եմ գիշերում: Տեսուչ Հայր Մուրբին պիտի խնդրեմ որ թույլ տա մի ամիս, կամ ինչքան կարելի է շատ մնամ այստեղ՝ Տաճարում:

Ուզում եմ էստեղ լինեմ, Աստծու հետ լինեմ: Ուզում եմ մեղքերիս թողության ստանամ, ամրապնդվեմ Աստծու ներկայությամբ: Ուզում եմ իմ ապրած սխալ կյանքից դարձի գամ դեպի Աստված ու Նրա զրկում լինեմ: Այդ կյանքով եմ ուզում ապրել: Ես ուզում եմ էստեղ մնամ, չեմ ուզում իմ Աստծուց հրաժարվեմ ու մեջքս դարձնեմ, դուրս գամ էստեղից: Չեմ ուզում դրսում չարի ձեռքը ընկնեմ, ինչպես որ ընկած էի տարիներ առաջ ու ապրում էի սխալ կյանքով: Ուզում եմ իմ Աստծու ձեռքի տակ լինեմ: Կարող է Աստված ինձ դարձյալ ինչ-որ դուռ ունի բացելու, չգիտեմ»:

– Էրի՛կ, պատմեցի՞ք Ձեր հարազատներին, ինչպիսի ն էր արձագանքը:

– «Այո, պատմեցի: Մի խոսք կա, որ ասում են «Լացն ու ծիծաղը քույր և եղբայր են», հենց այդպես էր: Հա՛մ ուրախացել էին, հա՛մ հուզվել: Մայրս շատ ուժեղ կին է, ինձ ասում էր. «Այ բալա, մի լացի, ամեն ինչ լավ կլինի: Ես հավատում էի որ ամեն ինչ էսպես էլ լինելու է»: Մորս հավատքը շատ մեծ է: Մի բան կարող եմ միայն ասել. մենք բոլորս՝ հայրս, ես, քույրս, եղբայրս, ապրում ենք մորս աղոթքներով: Կգարմանաք, բայց հայրիկս 4 տարի փտորիազ հիվանդություն ուներ, հակառակ մեր գենետիկ մաքրությանը: Բայց մորս աղոթքներով հայրիկս բուժվեց ու այսօր մաշկը մաս-մաքուր է: Ինձ հետ կատարված դեպքը նաև նվեր էր մայրիկիս ու հայրիկիս, քանի որ այդ օրը իրենց ամուսնության 43-րդ ամյակն էր»:

– Էրի՛կ ջան, թող Աստված օրհնի Ձեզ ու Ձեր ընտանիքին, մանավանդ մայրիկիդ, որ իր հավատքով Ձեզ միշտ առաջնորդել, ուղղորդել է դեպի Աստված և իր աղոթքներով էլ Աստված պահել է Ձեզ: Շատ ուրախ էի զրույցի համար:

– «Հայր Մուրբ Ձեզ էլ ցանկանում եմ հոգու ուրախություն»:

– Շնորհակալ եմ:

(Զրույցը ինչ-ինչ պատճառներով հետաձգվել էր, բայց Էրիկն ասաց. «Ոչինչ, Աստված ինչ-որ անում է, ուշ է անում, բայց պուպուշ է անում»):

ՆԵՐՍԵՅ ԱՐԴ. ԱՆՈՅԱՆ
08 Նոյեմբեր, 2017

7.9. Ինձ ինչն է ուրախացում գիտե՞ք:

Որ մարդը սայլակով ու զոջամբ գալիս է Աստուծո մոտ ու երբ Աստված նրան շնորհ է անում, նա (համաձայն իր հասկացության) չի ուզում «մեջք շոտ տա ու հեռանա» Աստծուց:

Արդեն որոշոր գիշերն է այս տղան Սր. Հարություն տաճարում է անցկացնում ու մեր հոգևորականների հետ ժամերգությունների ու Պատարանների մասնակցում: Երախտապատ է Աստուծո նկատմամբ, գտալ Քրիստոսին, ծարավ է ու ուզում է խմել հենց այսօր, իր ասում վաղը:



ԾՆԿԱՆ ԾԵՐԻՆ

⇒12

52 Գրայր ՈՒՆՈՐԱՐՅԱԼ. «Թումանյանը լինելով պայծառառես...

ուժեր կան»։ Ո՞վ է ուսումնասիրում մեր նշած իմացության երեք ուղիները, որոնք փակուղի են մտել։ Այսօրվա գրականագիտությունը, հոգեբանները չեն ուսումնասիրում նման բաներ։ Գուցե առանձին բացառություններ կան, բայց ես չեմ տեսել, որ այդ երեւոյթները հասկանան ու այդ մասին գրեն։

Իմ կարծիքով, այս վիճակը կշարունակվի, քանի դեռ կանտեսվի թեոսոֆիայի եւ ազնի յոգայի փիլիսոփայությունը։ Փիլիսոփայությունը բացակայության պատճառով ճգնաժամի մեջ է գրականագետը, հոգեբանը, կենսաբանը, բոլորը։ Եվ եթե Նժդեհի խոսքը հաշվի առնենք «Այդ սերունդը չնչին բացառություններ, ցայսօր էլ չունի կենսի յստակ փիլիսոփայություն, փիլիսոփայական կուռ աշխարհայեցողություն, ու այդ իսկ պատճառով մեր հոգեւոր կենսքը շարունակում է մսավ քառասային», որի պատճառով ստեղծվել է այս հոգեւոր քառասային վիճակը։ Որ մեկի հետ խոսում եմ, հարցնում, ունե՞ք այդ փիլիսոփայությունն, ասում են չէ։ Ես

ունեմ։ 25 տարի հրապարակում եմ այդ մասին։ Հնդկաճներով հանդես եմ եկել Անկախության, Շարժման տարիներից սկսած։ Ես քննադատում էի եւ ցույց տալիս իմ պատկերացրած այդ Արեւելք-Արեւմուտք համադրության հիման վրա մշակածս։ Իսկ ինչպես Նժդեհն է ասում. «Վաղվա Առաջնորդն իր հոգեւոր սնունդը կառնի նախ իր Ցեղի, ապա Արեւելքի հոգու աղբյուրներից»։ Հիմա 36 տարի այդ Արեւելքի հոգու աղբյուրները բացել եմ, ուսումնասիրում եմ, համոզվել եմ, որ բոլորն էլ Արեւելքից են օգտվել, արմատներից չեն կտրվել, իսկ երկուսի թունամյանի եւ Նժդեհի անունն եմ հաճախ նշում, որովհետեւ իմ ուսումնասիրությունների արդյունքում համոզվել եմ, որ նրանք իրենց ողջ գիտակցական կյանքը նվիրել են ազգի փրկության գործին։ Այսինքն, փրկություն են փնտրել։

– **Այս իրականության մեջ Արեւմուտքին ավելի ենք «հիշում»։ Ինչո՞ւ։**

– Այո, սա այն դեպքում, երբ Նժդեհն ասում է. «Ես նրան ժողովրդին պետք եմ նրա

ծանր պայքարում հանուն իր էթնիկական ինքնատիպության, ընդդեմ Արեւմուտքի դիմագրկող միջավայրի»։ Ամբողջ մի հարյուր տարի է, երեւի, որ արտասահմանում ուսումնասիրում են ֆեոմենալ երեւոյթներ. պայծառատեսություն, հեռագրագություն, մտքով առարկաներ տեղաշարժելու... աշխարհը մեր աչքի առաջ փոխվում է, մարդու նոր տեսակ է ձեւավորվում։ Ուսումնասիրող չկա, մեր մոտ գիտնական չկա։ Երեխաներ են ծնվում, որ տեսնում են բաներ, որոնք սովորական մարդիկ չեն տեսնում։ Էյնշտեյնը մի խոսք ունի. «Մեր այս նյութապաշտական դարում լուրջ գիտնականներ կարող են լինել խորապես համոզված կրոնավորներ»։ Դեռ շարունակվում են դասագրքեր գրվել կեղծ գիտելիքների հիման վրա։ Օրինակ, Ա. Նալչաջյանը գրել է. «Միտքը, մտապատկերը նյութական չէ, որեւէ մեկը չի կարող շոշափել»։ Հետաքրքիր է, նա կարողանում է էլեկտրոնը, ատոմը շոշափի, համոզվելու համար, թե դրանք կան։

Հարցազրույցը՝ Ռուզան ՄԻՆԱՍՅԱՆԻ
www.aravot.am

112 ԾԵԿԱԼ ԾԵՐԻՆ

նեխող ճահիճ է։ Ես ճահիճի մեջ եմ 67 տարի։ Արտասահմանում երբեք չեմ եղել։ Օայրագույն սահմանա Շնողն է։ Շնողից անդին մի այլ աշխարհ է։ Սիրում եմ Շնողը շնողերեն... Այնտեղ գրեթե ամեն օր եմ լինում, թերեւս հիշողությամբ։ Ուրքով չապրեցի, գոնե մտքով ապրեմ։ Այսօր բախտս բերել է։ Դեբեդի հունը բռնած տղայիս ավտոմեքենայով գնում եմ դեպի մանկություն։ Չայնարկիչի երգն աստիճանաբար կլանում է ինձ. Berera, berera, Bereg э́тот и тот, Между ними река Мойей жизни. Այլեքսանդր Մալինին է։ Նրա ամեն կատարում լիաթոք կյանք է։ Մեղեդին ցածր ձայնով գալիս-գալիս, կամացուկ կոհակվելով՝ հորձանք է տալիս։ Փշաքաղվում եմ, ընդերքից ջերմագին դող է բարձրանում, ողորում մարմինս։ Մեքենայի բաց պատուհանից փափուկ գեփյուրը շոյում է դեմքս։ Աչքերիցս բարակ առվակներով արցունք է հոսում։ Օ, ինչ քաղցր է ծննդավայրի հիշողությունը անկուրություն, պատանդություն, առաջին համերայր նման վայրի մեղրի քաղցրություն, եւ գերմոխտ ավեր, ուր անմոռուկներն են ծաղկում... Իսկ արցունքները հոսում են երկու աչքերից... Ուրախությունն ու տխրությունն են միացել իրար. Между ними река Мойей жизни течет, От рождения течет И до тризны... Գալարվում է ծով ծփանին։ Մեղեդին ահագնանում է, բարձրանում։ Վիթխարի ալիք է վազում լեռան պես ածղահա՝ գալիս-առնում ինձ իր կապույտ, սպիտակաճուփ թեւերին... Սիրտս հավվում է, մարմինս անհանում... Տրվել եմ տարերքի հրաշքին։ Ալիքն ինձ տանում է բարձր-բարձր, երկնքի լազուրին մերձ... Ես սավառնում եմ։ Ոչինչ ինձ չի հետաքրքրում։ Երգով գատվել եմ աշխարհից։ Ես գտել եմ ճամփան... Մինչդեռ իմ կյանքը կռիվ էր. կռիվ էր, բայց ոչ պատերազմ։ Գիշերով կռիվ էի գնում, ցերեկով խաղաղվում, մինչեւ գիշերվա ու ցերեկվա միանալը, մինչեւ մեծ խաղաղություն... Դժվար է, դժվար ծնկան ծերին էսպիպ պատմվածք գրել։ Կողքիս նույնիսկ Հրաչն է սրտնեղում. – Էդ ինչի՞ ես տնքում, արա... Թեթեւ-մեթեւ թող էթա, էլի..., – ասում էր։ Ո՞նց գնա... Էն էլ Վերնիսաժում, աղմուկի մեջ ծնկան ծերին կենտրոնանալ, մյուս կողմից էլ շամշադինցի Ջավենը, որ դիմացից անընդհատ միտքս շեղում էր։ Բերանի ստանոկը միալար աշխատանքի մեջ էր. մեկ բրդուն էր ծամում, մեկ խաչապարիին, բուլկին, պերաժկին, պոնչիկն ու հազարումի գրթուգիբի, վրայից էլ գույնզգույն հեղուկներ կլկլացնում, եւ տարօրինակն այն էր, որ ծնոտի երկու կողմով բլրադներն ուղցրած որոճում էր եւ, որ խիստ զարմանալի է՝ հավասարը-հավասարի խժոճում ու խոտում... Ես էլ մտքիս եմ գոռ տվել, թե ինչու եմ ապրում։ Աչքիս առաջ ահա մեկը, որ գտել է կյանքի իմաստը։ Շամշադինի բարբառով տուրխտներին հետ էնայեւ եր անցներեն տժժացնում, որ չգիտեինք կոմիկական թատրոնում ենք, թե՛ տրագիկոմիկ Վերնիսաժում։ Առավել քան զարմանալի էր, թե տուրխտները ոնց էին Ջավենին հասկանում։ Քանզի նրա անգլերենն ավելի էր հայերեն, քան բուն հայկազյան հայերենը։ Ջավենը դադար չունեց. ստանոկը միացրած՝ անընդհատ աշխատանքի մեջ էր։ Աստված մի արագաց, եթե հանկարծ կլինեստ ավելորդ սակարկել... Աջ ձեռքը հիտլերավարի բարձրացնում էր ու ձայնի ողջ ուժով բղավում. – Դավայ, գուրբա յ... Ձախորդը չքնաղ ամերիկուհի էր, նորաձեւությանը

հարիր պատառոտված ջինսով։ Օվառված տաբաղից ազդերը կածկլտում ու կրքոտ հրավերով ներս էին կանչում։ Դա մենք էինք նկատում։ Ջավենի ուշքումիտքը հերթական բրդուճի մեջ էր։ Ջինսը պիկի գրկել էր սլացիկ ոտքերը, բարեկազմ ազդերը, կլորիկ հետույքը շողշողուն անցքերից երեսան բերելով մարմնի բարենամանությունները։ Անդիմադրելի ցանկություն էր առաջանում զազանաբար պատռել, պատառոտել եւ մսացած անարատ հատվածները, խուժել ազդերի արանքն ու տիրաճալ աշխարհի չերեացող մասին։ Է, աշխարհ, աշխարհ՝ որտեղի՞ց ես գալիս եւ ուր ես գնում... Ես գգում էի. աշխարհը մի խորշից ելել ու էլի նույն խորշն էր ուզում... Մտնել էր ուզում... Ընդ չունեի, իմ տեղը Վերնիսաժում է։ Եթե՞նց ա՛ Մուսեն որտեղ բռնացրեց, էնտեղ էլ չոքացնում ա... Հիմի հակառակը՝ ես եմ Մուսին հոպ-սոտոպ արել. յախեն հավաքել, առաջը կտրել, ոտքերն ընկել, որ ինձ չլքե։ Քիչ մնաց։ Հետո ուշ կլինի։ Կարող է եւ հետոն չլինի։ Դե սաս, Մուսա, իմ լավ բարեկամ, քո ընկերը մի դատարկ խոսքից էլ ուրախացող ա, քո ընկերը քո դուլն ա, քո ճորտը, քո ծառա, կարոտ եմ ես քո էն քաղցր ու անուշ բարին, քո բերքը մի փեթակ մեղրից էլ թանկ ա, քո խորիսիւր ամենաքաղցր վայելքն է աշխարհում. քանի ծաղկից-ծաղիկ եմ թռել, քանի կոկոն թերթ եմ քրքրել, քանի-քանի ատե՛ջ բացել, քանի-քանի ականջ ու բերան մտել՝ քեզ տեսնելու համար, քեզ գտնելու համար, քո էն վարդ-շուրթ բերանի շնկշնկան շշուկը լսելու համար. Ման եմ եկել սարեսար, Գիր եմ արել քեզ համար՝ Մրտիկի բաց ներս գալ եւ, Անուշ-անուշ կյանք տամ քեզ... Ում՝ կյանք, ում՝ բախտ, ում էլ դարդուցավ... Մի գրող կար՝ մեծ մարդ էր, գրական աշխարհում ճանաչված մեծ գայլ, բայց քանի որ մեքենայից փոքր էր, ընկավ ավտոմեքենայի տակ։ Մի օր կյանքից դժգոհ տրտնջաց. «Մենակը մարդ չի, – ասաց, – ծանոթով ծնվում եմք, ծանոթով ապրում, ծանոթով մեռնում... Որ ծանոթ չունենաւ, քեզ գերեզմանի տեղ տվողն ո՞վ ա... Բայց մեծ հաշվով՝ ես աշխարհին անձնանոթ գալիս եմք, անձնանոթ գնում...»։ Աշխարհին ծանոթ լինելու համար անհրաժեշտություն կա, որ նախ մենք մեզ ծանոթ լինենք, փորձենք թափանցել մեր ներքը, տեսնենք ինչ կա այնտեղ, ինչ տիեզերք ենք մեր մեջ թաքցնում, միգուցե՛ն գանձագողի հիշատակարանը... Դեռ էն գլխից դա հասկացել էին հին հույները։ Ապոլոն աստծո տաճարի սալապատ հատակին, անմիջապես մուտքի մոտ գրված էր. «Օանիք գեղ»՝ հին հունական յոթ իմաստություններից մեկը, որ դարձավ Սոկրատի ողջ փիլիսոփայական համակարգի մեկնակետը։ Ես էլ եմ հարցին Սոկրատեսի պես մտնում։ Ինչքան ժամանակ է սուզվել եմ ներսս, փորում եմ, քրքրում ուղեղիս ծալերը եւ ամեն ինչի պատճառը փորձում իմ մեջ գտնել։ Փառք Աստծո, Մուսաս տակավին չի լքել ինձ։ «Թեկուզ ծնկանդ ծերին՝ ծանիք գեղ», – շշուկում էր ականջիս։ Իմացությունն էլ սահման ունի։ Մրջունն ինչքան պիտի զարգանա, որ իմանա մարդն ինչ է, կամ թե՛ մարդն ինչքան պիտի մեծանա, որ թափանցի տիեզերքի խորհուրդը... Չարդարանամ։ Օանեցի եւ ծամծմեցի ու մեջք ոչինչ չգտա։ Ուզում էի ոգեղեն տաճար կառուցել, բայց, ավաղ, դուր տառապանքով, սին անաճունժներով ու լալագին հառաչանքով յոթ ողորմելի տապանաբար շինեցի, որի վրա էլ հիմա իմ խոտոր ձեռքով գրում եմ. «Աստ հանգչի անկատար պատմվածքն այս»։

ՄԵԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմական ակնարկ



Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին ծնվել է 1676 թ. փետրվարի 7-ին Սեբաստիա քաղաքում։ Ուսումը ստացել է Սուրբ Նշան վանքում։ 1696 թ. մայիսի 17-ին օծվել է որպես քահանա, իսկ 1699 թ. Մխիթարը Կարմիր վանքի առաջնորդ Մարգար Եպիսկոպոսից ստացել է վարդապետի աստիճան։ Մխիթարն ընդունել է կաթոլիկ դավանանքը հավատարիմ ժառանգորդ լազնի հոգևոր ու գիտական գործունեությունը։

1700 թ. սեպտեմբերի 8-ին՝ Սուրբ Մարիամ Աստվածածնի ծննդյան տոնին, Կ.Պոլսում Մխիթարը և իր շուրջը համախմբված երիտասարդները հիմնել են Սուրբ Անտոն Աբբայի միաբանությունը։ Հիմնադրման ժամանակ միաբանությունում կար 12 վանական, որոնցից 4-ը վարդապետներ էին։

Միաբանությունը դրվել է Տիրամոր մասնավոր պաշտպանության ներքո՝ «Որդեգիր Կուսի-Վարդապետ Ապաշխարության» նշանաբանով, որի սկզբնատառերն այսօր էլ գրված են Մխիթարյան միաբանության զինանշանի վրա։

Մակայն իրավիճակի փոփոխման և Կ.Պոլսի հայ առաքելական ու կաթոլիկ համայնքների միջև հարաբերությունների ծայրաստիճան սրման պատճառով Մխիթարը հարկադրված էր դիմել փախուստի։

Խուսափելով օսմանյան հետապնդումներից Մխիթարն իր միաբանների հետ 1706 թ. տեղափոխվել է վենետիկյան իշխանության տակ գտնվող Մորեա թերակղզու Մեթոն բերդաքաղաքը։

Մակայն 1714 թ. դեկտեմբերի 3-ին թուրքերի վենետիկցիներին հայտարարած պատերազմի պատճառով, Մխիթարը միաբանների մեծ մասի հետ ստիպված լքում է Մեթոնը և տեղափոխվում Վենետիկ։ Վենետիկը լինելով անկախ հանրապետություն, այդ ժամանակաշրջանի Եվրոպայի մշակութային և լուսավորչական կենտրոններից էր։ Մխիթարն ընտրում է Վենետիկը՝ նախապատվությունը տալով գիտական ազատ գործունեությանը։

1712 թ. Վատիկանը Մխիթար Սեբաստացուն ճանաչել է միաբանության առաջնորդ, նրան շնորհել աբբահոր կոչում։ 1717 թ. Կղեմես XI Պապը հաստատել է Միաբանության կանոնադրությունը։

1717 թ. օգոստոսի 26-ին Սենատը Մխիթարյաններին մշտական բնակության իրա-

վունքով տրամադրում է Սուրբ Ղազար կղզին։ Այնտեղ նրանք հաստատվում են սեպտեմբերի 8-ին Միաբանության հիմնադրման տարեդարձի օրը։ Այստեղ էլ սեփական գծագրությունների միջոցով Մխիթարը կառուցում է իր ծրագրած մենաստանը, եկեղեցին և օժանդակ շենքերը։ Մխիթարն իրականացրել է գիտական կրթական գործունեություն՝ գերծ ժառանգորդական և հովվապետական առաքելությունից։ Նա պահպանել է հայ առաքելական եկեղեցու ավանդույթները։ Այսպիսով հիմնադրվել է Վենետիկի Մխիթարյան Միաբանությունը և ծավալել լայն հոգևոր ու գիտական գործունեությունը։



XIX դ. սկզբին, երբ Ֆրանսիան վերացրել էր իր տիրապետության ներքո գտնվող բոլոր կրոնական միաբանությունները, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I Բոնապարտը 1810 թվականի օգոստոսի 17-ի հրովարտական Ս. Ղազարի հայկական միաբանությունը ճանաչել է գիտական հաստատություն՝ «Հայկական ակադեմիա» պատվավոր տիտղոսով (տե՛ս Հավելված 1)։

Մխիթարը մահացել է 1749 թ. ապրիլի 27-ին Սուրբ Ղազար կղզու Ավագ Խորանի առջև։ Նրա գերեզմանը դարձել է ուխտագնացության վայր։

1773 թ. մայիսի 16-ին Ստեփանոս Մելքոնյանի աբբայության տարիներին միաբանների մի մասը ներքին հակասությունների պատճառով, Աստվածատուր արքեպիսկոպոս Բաբիկյանի գլխավորությամբ բաժանվել են և կազմել Մխիթարյան Միաբանության երկրորդ թևը, որը գործել է որպես առանձին ինքնուրույն միաբանություն։ Բաժանման ժամանակ 19 միաբան գնացել է Տրիեստ, իսկ 18 միաբան ժառանգել է Սուրբ Ղազարում։ Երկրորդ թևը սկզբում հաստատվել է Տրիեստ քաղաքում։ Այն բանից հետո, երբ Նապոլեոնը ստիպել է Մխիթարյաններին դուրս գալ Տրիեստից, միաբանները հաստատվել են Վիեննայում (Ավստրիա)։ 1811 թ. հունիսի 8-ին Ավստրիայի արքունիքը պաշտոնապես ճանաչել է Մխիթարյաններին և նրանց հատկացրել Սուրբ Ուլրիչի թաղամասի ծայրամասում գտնվող նախկին Կապուչին վանքը։

Վանականները կառուցել են իրենց սեփական եկեղեցին, որի ճարտարապետական հորինվածքը և նկարագիրը պատկանել է եվրոպական արվեստին։ Առանձին կառուցել են դպրոց և ստեղծել տպագրատուն։

1901 թ. Միաբանության տարեգրության

մեջ տեղի է ունեցել ամենանշանավոր իրադարձությունը՝ նշվել է Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակը։ Վիեննայում ու այլ քաղաքներում շուրջ 200.000 մարդ մասնակցել է այս իրադարձությանը։

1935 թ. հոկտեմբերին Մխիթարյանները Վիեննայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ տոնել են Հայկական մշակույթի և կրոնական պատմության ամենանշանավոր իրադարձություններից մեկի՝ Սուրբ Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը։

1961 թ. Մխիթարյանները նշել են Վիեննայի միաբանության հիմնադրման 150-ամյակը, որի առիթով կազմակերպված հավաքույթն անց է կացվել Վիեննայի ամենահին մենաստաններից մեկում։

Վիեննայի Մխիթարյան միաբանությունը 1773 թ.-ից սկսած աշխարհի տարբեր ծայրամասերում ունեցել է 45 մասնաճյուղ՝ Եվրոպայում, Աֆրիկայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում։ Դրանք իրենց մեջ ներառել են ժառանգավորաց դպրոցներ, վարժարաններ, ինչպես նաև հոգևորական նստավայր։

2000 թ. Վիեննայի Մխիթարյան Միաբանության գլխավոր աբբահայր Հայր Գոճանյանի օրոք տեղի է ունեցել Մխիթարյան երկու միաբանությունների միավորումը։

Մխիթարյան միաբանությունը, Վենետիկի և Վիեննայի պատմական գույք ճյուղավորումներով, երկարատև բանակցություններից և քննարկումներից հետո Վենետիկի Ս. Ղազար Մայրավանքում 2000 թ. հունիսի 10-21-ը կազմակերպել է միացյալ ընդհանուր արտակարգ ժողով, որին մասնակից երկու հաստատությունների բոլոր միաբանները որոշել են միավորվել ստեղծելով Մխիթարյան միացյալ միաբանություն մեկ կենտրոնական վարչությունով։


Վենետիկի Ս. Ղազար Մայրավանքը Մխիթարյան միացյալ միաբանության գլխավոր կենտրոնատեղին է, Վիեննայի վանքը առաջին գլխավոր մենաստանը, որը պետք է ունենա տեղական աբբահայր տիրույթը կրող մի վանապետ։ Ջույզ միաբանությունների բոլոր առաքելավայրերն ու կենտրոնները կառավարվելու են նորընտիր ընդհանրական աբբահոր և իր Միացյալ վարչական խորհրդի կողմից։

Միավորման շնորհիվ որոշ ժամանակով լուծվել է միաբանության համահայկական կրթական գործունեության խնդիրը։

1990-ական թթ. սկզբին Վիեննայի Մխիթարյան միաբանությունը երկարաժամկետ վարձակալության հիմունքով Հայաստանի Հանրապետության դեսպանությանն է տրամադրել մասնաշենք, դրա դիմաց Հայաստանի Հանրապետությունում վարժարան հիմնելու նպատակով ստանալով մի հողակտոր և շինություն Ավան համայնքում։ 1994 թ. Երևանում բացվել է Մխիթարյանների կենտրոնը, որտեղ գործում է ժառանգավորաց դպրոց, կա մատուռ և գրադարան։

130

1736 թ.-ից մինչ այսօր աշխարհի տարբեր մասերում գործել է շուրջ 30 Մխիթարյան վարժարան: Դրանցից շատերը տարբեր իրավիճակներից ելնելով փակվել են:



Ներկայումս գործում են Մխիթարյանների Բուենոս Այրեսի, Հալեպի, Բեյրութի, Ստամբուլի երկու, Փարիզի, Լոս Անջելեսի վարժարանները, ինչպես նաև Լիբանանի և Հայաստանի ժառանգավորաց դպրոցները, որոնց վերապահված է միաբանությունը նոր վարդապետ-միաբաններով համալրելու առաքելությունը:

Իր ստեղծման օրից մինչ այսօր Մխիթարյան միաբանությունը եղել և ժամանակ է հալ գիտության և մշակույթի օջախներից մեկը շնորհիվ իր մշակութային և գիտական հատուկ ժառանգության:

Սուրբ Ղազարի միաբանությունն ունի իր պարբերականը «Բազմավեպ» հայագիտական հանդեսը, որը 1843 թ. հիմնադրել են ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը Գաբրիել Այվազովսկին և Ղևոնդ Ալիշանը: Հիմնադրման օրվանից մինչ այսօր հանդեսը շարունակում է կատարել իր ուրույն ներդրումը հայագիտության մեջ: Այն Եվրոպայի չորրորդ ամենահին պարբերականն է:

Մխիթարյան միաբանությունն աշխարհում միակ կաթոլիկ համայնքն է, որ երբեք լատինացված չի եղել՝ շնորհիվ միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու: Մխիթարյանների արարողությունները երբեք չեն եղել լատինադեմ և չեն կատարվել լատիններենով, այլ բացառապես հայերենով համաձայն Հայ առաքելական եկեղեցու ծիսական արարողակարգի:

Մխիթարյան միաբանությունն ունի հնագիտական թանգարան: Թանգարանի հավաքածուն սկսել է կազմավորվել միաբանության հիմնադրման առաջին օրից 1700 թ. սեպտեմբերի 8-ից: Բուն թանգարանը հիմնվել է 1717 թ., երբ Մխիթարյանները հաստատվել են Վենետիկի Սուրբ Ղազար կղզում: Այն բաղկացած է մի քանի բաժիններից: Թանգարանը 17-րդ դարի վենետիկյան արվեստին ու ճաշակին բնորոշ մի կառույց է, որն իր մեջ ամփոփում է արևելյան բազմաթիվ հնություններ՝ հայկա-

կան, հունական և հնդկական արվեստի նմուշներ:

Մխիթարյան միաբանության Մատենադարանն ունի 4000-ից ավել հավաքածու և բազմազան նյութերի հարստություն, որոնք ընդգրկում են (5-19-րդ դդ.) 1200 տարվա ժամանակահատված: Այստեղ խնամքով պահվում են հայ ձեռագիր արվեստի գլուխգործոցներից մեկը՝ Մլքե թագուհու Ավետարանը (862 թ.), որը հավանաբար պատրաստվել է Վասպուրականում և պատկերազարդվել մանրանկարով, թերևս մինչև այսօր մեզ ծանոթ հայկական ձեռագրերից մեծագույն հարստություններից մեկն է: Մատենադարանը հայտնի է նաև հայերեն հնաժողովի հարուստ հավաքածուով: Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանը հիմնվել է 1811-1812 թթ. (մինչև 1999թ.), ուր հիսուն լեզուներով տպագրվել է շուրջ 2000 անուն գիրք:

1812 թ. հուլիսին լույս է տեսել Վիեննայի տպագրության առաջին հրատարակությունը: Այն Մխիթարյանների առաջին տպարանն է: Կարճ ժամանակահատվածում Մխիթարյանների Վիեննայի տպագրատունը շնորհիվ նրա առաջին ղեկավար հայր Արիստակես Ազարյանի (նա հետագայում դարձել է Վիեննայի Մխիթարյան միաբանության գլխավոր արքահայրը (1826-1855)), ձեռք է բերել մեծ համբավ, ինչպես նաև ֆինանսական զգալի նվաճումներ: 1829 թ. գլխավոր արքահայր Արիստակես Ազարյանը հիմնադրել է կաթոլիկական գրքերի տարածման ընկերակցությունը, որն իր գոյություն 20 տարիների ընթացքում հրատարակել է շուրջ 100 աշխատանք՝ 475 000 տպաքանակով:

Մխիթար Արքահայրը մեծ ուշադրություն է դարձրել հայկական ձեռագրերի հավաքածունը և դրանց պահպանմանը: Միաբանությունում 1750 թ. եղել է 250 ձեռագիր: Դարավերջին այդ թիվը հասել է 900-ի, իսկ 1850 թ. 1200-ի: 1900 թ. այդ թիվը 2000 է, իսկ 1990թ.-ին Վենետիկի Մխիթարյաններն ունեին շուրջ 5000 ընտիր ձեռագիր մատյանների հավաքածու: Հայկական ակադեմիական և գիտական առաջին բառարանները նույնպես կազմվել են Մխիթարյանների կողմից:

Կետարյա աշխատանքի շնորհիվ վենետիկյան երեք վարդապետներ կազմել են հայերեն լեզվի «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» արժեքավոր բառարանը՝ երկու մեծածավալ հատրով, որը հրատարակվել է 1836-1837 թթ.:

Մխիթարյանները մեծ ներդրում ունեն նաև հայ պատմագրության զարգացման մեջ, ի մասնավորի՝ Հայր Միքայել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմություն» աշխատության: Մխիթարյանների աշակերտները զբաղվել են նաև թարգմանչական գործունեությամբ:

1973 թ. Մխիթարյանները սկսել են հրատարակել «Հայագիտական մատենաշարը» բաղկացած 26 արժեքավոր աշխատությունից:

Հայագիտական բնագավառում զգալի արդյունքների միաբանությունը հասել է իր երկու հայագիտական հանդեսների՝ «Բազմավեպի» և «Հանդես ամսօրյա»-ի տպագրության միջոցով:

ՀՀ սփյուռքի նախարարության իրականացրած միջոցառումները՝ նվիրված Մխիթարյան միաբանությանը.



1. 2011 թ. հոկտեմբերին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ու Մխիթարյան միաբանության մասնակցությամբ կազմակերպված Վիեննայի Մխիթարյան միաբանության 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:

2. ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ Հայ Կաթողիկե եկեղեցու Զմմառի և Մխիթարյան միաբանությունների և Երևանի Մատենադարանի միջև կնքված համաձայնագրերով նախատեսվել է թվայնացնել, ամբողջացնել և հինգ հատորներով տպագրել Միաբանության շուրջ 1400 հին ձեռագրերի և հնատիպ գրքերի մատենագրությունը:

3. 2012 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության և ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ հայ տպագրության 500-ամյակին առիթով կազմակերպվել են գիտական մի շարք կոնֆերանսներ, ցուցահանդեսներ Զմմառում և Մխիթարյան միաբանությունում: Աչքի է ընկել հատկապես հայ գրատպությանը նվիրված ցուցահանդեսը Սուրբ Ղազարում, որտեղ ներկայացված են եղել հայ տպագրության պատմությունը 1512 թվականից մինչև մեր օրերը: Տեղի է ունեցել նաև ՀՀ սփյուռքի նախարարության և Մխիթարյան միաբանության կողմից կազմակերպված «Հայ գրքի հետքերով» խորագիրը կրող գիտաժողով:

4. 2014 թ. հուլիսին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել Մխիթարյան միաբանության Սերի Սամուել Մուրադյան վարժարանի և մշակութային կենտրոնի հիմնադրման 180-ամյակին նվիրված միջոցառում:

5. 2017 թ. սեպտեմբերի 9-ին մեկնարկել են Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան Մայրավանքի հաստատման 300-ամյակի միջոցառումները: Մխիթարյան միաբանության հրավերով Ս. Ղազար կղզում Մխիթարյան Մայրավանքի հաստատման 300-ամյակի միջոցառումներին Վենետիկում մասնակցել է ՀՀ սփյուռքի նախարար

Հայկական առաջին թղթադրամները

փոփոխություններ պետք է կրեր՝ հաշվի առնելով դրամի պաշտպանվածության համար անհրաժեշտ դետալների ջրանիշների, ստորագրությունների և նախազարդերի ավելացումը, ուստի հայկական թղթադրամի տպագրման գործընթացը մի փոքր ձգձգվեց:

Սակայն, Ֆեթվադյանի և նախարար Գրիգոր Զաղեթյանի ջանքերով դրամանիշների ձևավորումը կրեց միայն աննշան փոփոխություններ, թեպետ տպագրական ընկերությունն առաջարկում էր որոշ հատվածներ ամբողջապես փոխել: Նշենք նաև, որ Ֆեթվադյանի էքզիզների հիման վրա տպագրվեցին նաև առաջին հայկական փոստային նամականիշերը: Մասնագետների կարծիքով, հայկական առաջին թղթադրամների գեղարվեստական ձևավորումն իրոք այնքան կատարյալ էր, իսկ տպագրական որակն այնքան բարձր, որ մինչ օրս դրանք համարվում են իրենց ժամանակի ամենալավ պաշտպանվածությունն ու ձևավորման ազգային գեղարվեստական արժեքն ունեցողներից մեկը:

Ռուբեն ՇՈՒԽՅԱՆ



140

Հրանուշ Հակոբյանը:

Միջոցառումների շրջանակներում սեպտեմբերի 9-ին Վենետիկի Սուրբ Մարկոս տաճարում տեղի ունեցած երեկոյան ժամերգությանը ներկա է եղել Վենետիկի Պատրիարք, Գերշ. Ֆրանչեսկո Մորալիան:

Սեպտեմբերի 10-ին Սուրբ Ղազարի եկեղեցում Մխիթարյան Միաբանության քահանայապետական պատվիրակ Գերշ. Լևոն արք. Զեքիյանի հանդիսապետությամբ տրվել է Սուրբ և Աննաի պատարագ:

Վենետիկում բացվել է Մխիթարյան Միաբանության Մայրավանքի հիմնադրության և պատմության մասին պատմավավերագրական ցուցահանդես և Ս. Ղազարի եկեղեցում տեղի է ունեցել հայ հոգևոր և ժողովրդական երգերի համերգ:

Մխիթարյան Միաբանության քահանայապետական պատվիրակ Գերշ. Լևոն արք. Զեքիյանի խոսքով տարին նվիրվել է Մխիթարյան միաբանության Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հաստատվելու 300-ամյակի տոնակատարություններին, որոնց մեկնարկը տրվել է սեպտեմբերյան միջոցառումներով:

6. 2017 թ. հոկտեմբերի 23-25-ը ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ ԳԱԱ հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունքի, Երևանի պետական համալսարանի, Մեարոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանի, Վենետիկի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ Հայաստանում իրականացվել են Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյակին նվիրված միջոցառումներ:

Մեարոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում հոկտեմբերի 23-ին տեղի է ունեցել «Մխիթարյաններ. 300-ամյա պատմություն» խորագրով ցուցահանդեսի բացման արարողությունը:

Արժևորելով Մխիթարյան Միաբանության դերն ու նշանակությունը հայապահպանության, հայոց լեզվի, գրականության և հայ մշակույթի զարգացման գործում՝ բացման խոսքով հանդես է եկել Մատենադարանի տնօրենի պաշտոնակատար Վահան Տեր-Ղևոնդյանը, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Ողջունի խոսքով հանդես է եկել Մխիթարյան Միաբանության քահա-

նայապետական պատվիրակ, Թուրքիայի Հայ Կաթողիկե եկեղեցու թեմի առաջնորդ Գերապայժառ Տեր Լևոն արք. Զեքիյանը:

Այնուհետև տեղի է ունեցել Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյակին նվիրված նամականիշի մարման արարողություն: Ներկայությամբ Մատենադարանի ցուցասրահում հնարավորություն են ունեցել դիտելու «Մխիթարյաններ. 300-ամյա պատմություն» խորագրով ցուցահանդեսը:

Հոկտեմբերի 24-ին վերոնշյալ միջոցառումների շրջանակում ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ ԳԱԱ հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունքի, Երևանի պետական համալսարանի, Մեարոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի, Վենետիկի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ և ՀՀ ԳԳԼ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում սկսվել է «Վենետիկի Մխիթարյան միաբանություն-300» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողով, որին մասնակցել են 50-ից ավելի գեղուցողներ:

Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան Մայրավանքի հաստատման 300-ամյակի նախատեսված միջոցառումներ.

– Նախատեսվում է անցկացնել նմանատիպ միջոցառումներ նաև սփյուռքյան մի շարք համայնքներում:

– **2017 թ. նոյեմբեր-դեկտեմբեր** ամիսներին նախատեսվում է ՀՀ սփյուռքի նախարարության և Երևանի Մխիթարյան կրթահամալիրի համատեղ միջոցառում՝ Մխիթարաբբահոր կյանքին ու գործունեությանը նվիրված թատերական ներկայացում կրթահամալիրի սաների մասնակցությամբ:

– **2018 թ. մարտ** ամսին ՀՀ սփյուռքի նախարարությունը նախատեսում է անցկացնել Մխիթարյան միաբանության կողմից հրատարակվող «Բազմավեպ» հայագիտական, բանասիրական, գրական հանդեսի 175-ամյակին նվիրված գիտաժողով:

– **2018 թ. Իտալիայում** նախատեսվում է անցկացնել գիտաժողով՝ նվիրված Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակին:

Կատ.՝ Գոհար ՅՈՎԱՍԵԲՅԱՆ

Հավելված 1

ՆԱԺՈՒԼՈՆ,

Աստուծոյ շնորհքով եւ

Սահմանադրութիւններուն ,

Կայսր Ֆրանսազինելու, Թագաւոր Իտալիոյ,

Պաշտպան Ռենի Դաշնակցութեան,

եւ Միջնորդ Չուիցերիոյ Դաշնակցութեան,

Վճիռ հանեցին եւ կը վճռենք ինչ որ կը հետեւի:

Յօդ. I

Վենետիկի Սուրբ Ղազար Կղզիի Հայ Վանականները պահպանուած են իրենց ներկայ վիճակին մէջ, մինչեւ մեզմէ այլ կերպ որոշուի:

Յօդ. II

Հարկային ու Կոսովի Նախարարները յանձնառու են ներկայ Հրովարտական գործադրութեան որ պիտի հրատարակուի ու ներմուծուի օրէնքներու Տեղեկատուին մէջ (Գրքին) մէջ:

Տրուած մեր Սուրբ Գլուտ Կայսերական Պալատէն այս օր

17 օգոստոս 1810

ՆԱԺՈՒԼՈՆ.

Կայսրին եւ Թագաւորին համար:

Նախարար Պետքատուողարը,

Ա. ԱԼԴԻՆԻ.

ՄԻԼԱՆ, Թագաւորական Տպարանէն, գին 8 Սենտ

◆ Վախը ենթակային դարձնում է անակտիվ, ինքնապաշտպանվելու անկարող, դա սպանում է նրա պայքարելու կամքը և խղճմտանքի անկախությունը. կարճ ասած՝ ամեն վսեմ զգացում: Նա հաճախ անհատների միջոցով հոգեպես հարվածում է, կազմալուծում ազգը: Ըստ ցեղաբանների՝ վախի թագավորությունը տարածվում է մինչև ցեղերը: Դա արտահայտվում է կա՛մ տարերայնորեն, կա՛մ պարբերաբար: Վերջին ախտանշական ձևը՝ նախերգանքն է ցեղի հոգևարքի: Դա նշան է, որ ազգն այլևս ազգ չէ, այլ մարդկային նախիր: Ազգերը նախրանում են, երբ մնում են անցեղահաղորդ: Երբ ցեղահաղորդ չէ ազգը, նրա մեջ ցեղի ուժերը՝ ՏԻԳՐԱՆ, ԱՐՏԱՇԵՄ, ՎԱՐԴԱՆ, ՎԱՀՄԱՆ, ՄՈՒՇԵՂ, ՄԱՆՎԵԼ, մնում են քնած: Ցեղակրոնությունը գալիս է հրահրելու այդ ուժերի զարթոնքը և նրանց արտահայտություն տալու:

Գարեգին ՆՇՂԵՅ

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐՈՒՄ ԹՈՒՐԷԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋ ԴԱՐՁԱՎ ՄԱՐԴ, ԻՍԿ ՀԱՅԸ ՀԱՅԻ ՀԱՄԱՐ ԴԱՐՁԱՎ ԹՈՒՐԷ

Վաղուց էի կասկածում, տեղի՞ն է արդյոք պատմել այս մասին: Այսինքն, այս երկու իրական դրվագը եղբորս հետ է պատահել մի քանի տարի առաջ, երբ նոր էր տեղափոխվել ՌԴ ընտանիքի հետ:

Ապրիլի սկիզբ էր, երբ իրենց տան դուռը մի անձանոթ տարեց հայ մարդ թակեց: Ներկայացավ որպես Ռոստոմ-վի հայ համայնքի ակտիվիստ: Տուն կանչեցին, սեղանի հրավիրեցին: Հյուրը դեռ հարցուփորձ արեց եղբորս ընտանիքի մասին, հիացմունք արտահայտեց երեք արու զավակի առիթով (աղջիկը դեռ չէր ծնվել): Հետո մի տեսակ անհամարձակ ասեց, որ իմացել են ավագ տղան նկարչական տաղանդ ունի, մարզի դպրոցական մրցույթի հաղթող է, ու եկել է խնդրանքով՝ արդյոք տղան Ցեղասպանության հերթական տարեկիցի հետ կապված մի պատասխան չի՞ նկարի համայնքի համար: Բնական է, եղբայրս կանչեց տղային, երեխան էլ պատրաստակամությամբ սկսեց հետաքրքրվել, թե ի՞նչ պետք է պատկերված լինի պատատի վրա: Երբ հյուրը բացատրեց, թե ինչ կլինեն ցանկալի, հանկարծ հուզվեց ու ձեռքի թաշկինակը տարավ աչքերին:

– Դուք գիտե՞ք ինչու՞ հարկ եղավ Ռոստոմվից այստեղ հարյուր կիլոմետր զայր: Քաղաքում ամեն երրորդ հայի զավակը կամ երաժշտական է սովորում կամ նկարչական: Բայց մեկը «ժամանակ չունի», մյուսը պայման է դնում, թե համայնք իր երեխայի նկարների ցուցահանդես պիտի կազմակերպի, իսկ մի երկուսը

համաձայնվում են՝ գնա, թող հյուպատոսարանը գումար դուրս գրի, նկարենք: Իսկ դուք նոր եկած, երեք երեխայի տեր, ձեր կինն էլ հոյ, նույնիսկ չեք հարցնում ներկերի ու կտավ բերելու՝ եմ թե ոչ ... Այս ի՞նչ ազգ ենք դարձել, մինչև ձեր դուռը ծեծելը դուրսը արդեն ճնշումս բարձրացել էր մտքից, թե այստեղ ինչ եմ լսելու:

Մի քանի ամիս հետո, երբ ծնվեց չորրորդ երեխան, եղբայրս դիմել էր կացության կարգավիճակ ստանալու: Ավանդական ռուսական բյուրակրատիայի օրենքներով անհրաժեշտ թղթերը ձեռքին քանի երրորդ անգամ շրջեց համապատասխան հիմնարկի սեյակներով, անհիմա պատճառաբանությունների դեմ առնելով: Ու երբ ավագ տղաների հետ կանգնած էին հիմնարկի մուտքի մոտ, նրան մոտեցավ զգացվող աղբյուրանական ակցենտով խոսացող մեկը:

– Դուք ի՞նչ հարցով եք, զեմյակի:

Եղբայրս մինչ այդ էլ էր տեսել իր այդ մարդուն հիմնարկի միջանցքում, մշտապես ինչ որ թղթեր ձեռքին և, ենթադրելով, որ նա «գործ սարքող» է, բացատրեց իրավիճակը:

– Յավաշ, կինդ ու չորս երեխադ Ռուսաստանի քաղաքացի են ու քեզ կացության թուղթ չե՞ն տալիս: Կտա ս ինձ թղթերդ, ես մտնեմ:

Եղբայրս մեկնեց թղթերը և, իհարկե, հայկական անձնագիրը: Անձանոթը թեթևակի նայեց տեղեկանքներին ու անձնագիրն էլ հետը դրեց ձեռքի մսացած թղթերի

հետ ու մտավ հիմնարկ:

Կես ժամից հետո դուրս եկավ ու վերադարձրեց ամենը:

– Այս վճարումը կանես բանկում, և կգաս նշված օրը ստանալու:

– Շնորհակալություն, իսկ քեզ ինչքա՞ն եմ տալու:

Աղբյուրանցին ծիծաղեց:

– Ինձ բան պետք չի, ես միջնորդ չեմ:

Ես տեղի աղբյուրանական համայնքի նախագահն եմ ու միաժամանակ իրավաբանը: Այստեղ գալիս եմ մեծ թղթաբանական հարցերում օգնելու համար:

– Բայց տեսար, որ ես հայ եմ ...

– Հա... Բայց մեծ պատեղ երկուսս էլ օտար տեղ ենք՝ չէ՞ որ ուրիշ հարցում դու էլ ինձ խօսեցիր:

Երբ մերոնք վերադառնում էին տուն, միջնեկ տղան հարցրեց էլ եղբորս:

– Պապ, մեր քաղաքում հայկական համայնքի գրասենյակ էլ կա, ինչու տարին մի անգամ ապրիլին են բացվում ու այսպիսի բաներով չեն զբաղվում, հայերին չեն օգնում: Թուրքերին, ի՞նչ է, այստեղ ավելի շատ են հարգում:

– Հա, տղաս, երևի ավելի շատ, քանզի հարյուր տարում թուրքը աշխարհի առաջ դարձավ մարդ, իսկ հայը հայի համար դարձավ թուրք:

Լեւոն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թուրք պատմաբանի կարծիքով՝ Թուրքիան պիտի ներողություն խնդրի և վերադարձնի հայերի ունեցվածքը



Թուրք պրոֆեսոր Բասքըն Օրանը, որը տարիներ շարունակ զբաղվել է Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությամբ, արձագանքել է Գերմանիայի դաշնային խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը. այս մասին գրում է Ermenihaber.am-ը:

Թուրքական ընդդիմադիր «T24.com.tr» կայքի տեղեկացմամբ՝ Օրանը կարծիք է հայտնել, որ Թուրքիան պիտի հատուկ շրջաբերական հրապարակի և ներողություն խնդրի հայերից: Ըստ Օրանի Անկարան պիտի ներողություն խնդրի նաև սեփական քաղաքացիներից «այդ ողբերգությունը մինչև օրս նրանցից թաքցնելու համար»:

Թեմայի վերաբերյալ իր հակիրճ անդրադարձում Օրանը բարձրացրել է նաև հայերի ունեցվածքի փոխհատուցման հարցը: Մասնավորապես գրում է. «Քանի դեռ թուրքական պետությունը շարունակում է ջայլամի քաղաքականությունը, միջազգային հանրության կողմից հասցվող հարվածները շատանալու են և էլ ավելի ուժգնանալու: Ժխտումների շարքը սկսվեց «Հայերին սպանել են: Այ քեզ բան» հայտարարությամբ: Շարունակվեց «Մենք նրանց չենք սպանել, այդ նրանք են մեզ սպանել» պնդումներով: Իսկ այժմ էլ հասել է այն մակարդակին, որ ասում են. «Փոխադարձ կոտորածներ են եղել»: Մա խայտառակում է մեր երկիրը: Ես ինչու և պիտի քողարկեմ երիտթուրքերի հանցագործությունները»:

Թուրք մտավորականը նշել է, որ ցեղասպանություն բառի օգտագործումը պարտադիր չէ և ինքն էլ, տարբեր պատճառներից ելնելով, այն չի օգտագործում: Մակայն նա առաջարկել է, որ Թուրքիան անվտանգապես Գերմանիայի խորհրդարանի որոշմանն ի պատասխան գրավոր հայտարարությամբ հանդես գա, որում մասնավորապես կնշվի հետևյալը.

– Մենք դատապարտում ենք երիտթուրքերի կառավարության վարած քաղաքականությունը, որի հետևանքով հարյուր հազարավոր օսմանահպատակ հայեր պատերազմի ընթացքում բնաջնջվեցին, Անատոլիան աղքատացավ: Ցավակցում ենք այդ մարդկանց թոռներին և հայտարարում, որ թեկուզ որպես խորհրդանշական քայլ փոխհատուցելու ենք նրանց ունեցվածքը:

– Ներողություն ենք խնդրում մեր քաղաքացիներից՝ մինչ օրս այս աղետը նրանցից թաքցնելու համար:

◆ Սիրե՛լ – սիրում են և՛ շուկան, ուր կարելի է շահել. սիրում են դրամը, հաճույքը, հարմարությունը – անցողական սակավորժեք հազար ու մեկ բաներ: Իսկ Հայրենիքը – դա, իբրև գերագույն արժեք – պատկանում է սրբազան այն առարկաների կարգին, որոնք պաշտվում են նա՛և: Սիրում ենք շա՛տ բաներ, բայց արյուն չենք թափում նրանց համար: Հայրենիքը, սակայն, պա՛հանջում է ո՛չ միայն մեր սիրտը, այլև՝ մեր արյունը, երբ դա անհրաժեշտ է իր գոյության համար: Սերն ավելի իրավունք է ճանաչում, պաշտամունքը՝ պարտականություն:

◆ Ապրել ու գործել միայն այն բանի համար, որի համար արժե մեռնել, և մեռնել միայն այն բանի համար, որի համար արժե ապրել:

◆ Եղի՛ր ուժեղ, էլի ուժեղ և միշտ ուժեղ: Ժողովուրդները ի վերջո տեր են մնում ոչ թե նրան՝ ինչ որ նրանց տրվում է, ինչ որ մտրում են, այլ միայն նրան՝ ինչի որ արժանի են, ինչ որ սեփական ուժերով ապահովել են կարողանում:

Գարեգին ՆՇԴԵՅ

«Մոտենում ենք վճռական պատերազմի շեմին»

Հարցազրույց Սորբոնի համալսարանի քաղաքագիտության դոկտոր ՀԱՅԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ հետ

– Պարոն Մարտիրոսյան, Արցախյան հակամարտության կարգավորման վերջը չի երևում: Հաջորդ տարի մեր ռազմական ծախսերն ավելանալու են: Արդյո՞ք դրա անհրաժեշտությունը կա, թե՞ եղած միջոցները բավարար են Ադրբեյջանին հակահարված հասցնելու համար:

– Այո, իհարկե, կա: Բսկ ի՞նչ պետք է անել, նվազեցնել էլ դրանք: Ադրբեյջանի հետ սպառազինությունների մրցավազքում, եթե չհաշվենք հայկական «Բսկանդերների» ուռնակցված և միջակայան առկայությունը, Հայաստանը տանուլ է տալիս: Բսկ բանակի ծավալի և հանրության բարոյական վստահության առումով Հայաստանն արդեն սկսել է Ադրբեյջանին անհամեմատորեն և շատ վտանգավոր կերպով զիջել: Այս ֆոնին ծախսերի մեծացումը, եթե դա արվի խելացի և արդյունավետ կերպով, անհրաժեշտ նախաձեռնություն է:

– Զանի որ հակամարտող կողմերը ձգտելու են անընդհատ նոր զինատեսակներ գնել, այդպիսով չի՞ խորանա սպառազինությունների մրցավազքը Հայաստանի և Ադրբեյջանի միջև:

– Ո՛չ: Որովհետև Ադրբեյջանը մրցավազքի չի բռնվել Հայաստանի հետ: Դա ԱՄՆ-ԻՄՇՄ սպառազինությունների մրցավազքը չէ, որտեղ ամեն մեկը զինվում էր պարիտետ պահելու համար, բայց հասկանում է, որ առաջինը երբեք չի հարձակվելու: Ադրբեյջանն ուղղակիորեն պատրաստվում է լայնածավալ և վճռական պատերազմի և լի է կամքով այդ պատերազմում հաղթելու: Բսկ դա ոչ թե Հայաստանի պարտություն, այլ Հայաստանի ավարտ կլինի: Այս պայմաններում Հայաստանը ոչ թե պետք է սպառազինությունների մրցավազքի մեջ մտնի կամ դրանից զգուշանա, այլ պետք է սպառազինական մարայթոն սկսի, որը մինչև հաղթական ավարտն իրավունք չունի կասեցնելու:

– Կային կարծիքներ, որ մենք ևս պետք է ընտրենք Իսրայելի ուղին, ոչ միայն ավելացնենք ռազմական ծախսերը, այլև կանայք ևս պետք է ծառայեն բանակում: Մենք ունենք տնտեսական բավարար պոտենցիալ՝ նման քայլեր ձեռնարկելու համար:

– Տնտեսական պոտենցիալն այստեղ ի՞նչ կապ ունի: Անվտանգությունն ու ազգային շահը պետք է վեր լինեն ամեն տեսակի տնտեսական պոտենցիալներից կամ դրանց չգոյությունից: Ինդիքն այն է, որ մենք մոտենում ենք վճռական պատերազմի շեմին և մտնել դրա մեջ անպատրաստ կամ առանց իրական որակ ունեցող բանակի ուղղակի պետական ինքնասպանություն կլինի: Կանայք Հայաստանում պետք է ծառայեն: Ինչո՞վ են հայ կանայք տարբերվում իսրայելցի կամ քուրդ կանանցից, ովքեր տյուրամարդկանց հավասար ծառայում են: Այսօր բոլորովին այլ իրականություն կա տարածաշրջանում, քան մի քանի տարի առաջ էր: Ադրբեյջանն արդեն հզոր պետու-



թյուն է, լուրջ քաղաքական վեկտորներով և միջազգային ծանրակշիռ խաղաքարտերով: Ադրբեյջանական բանակն էլ, եթե մի պահ մոռանանք մեզանում տարածված թշնամուն թերագնահատելու սին ախտը, արդեն իրենից սկսել է լուրջ ուժ ներկայացնել: Մա նոր սպառնալիք է, որի հետ արդեն այս նոր իրավիճակում անպայմանորեն պետք է հաշվի նստել:

Մյուս կողմից, իհարկե, կան ծանրակշիռ կարծիքներ, որ կանանց ծառայությունը կարող է հանգեցնել կանանց մասսայական արտագաղթի: Դա, անշուշտ, նույնպես հնարավոր է: Բայց, եթե կանանց գորակոչմանը զուգահեռ մեծ ջանքեր գործադրվեն բանակի և ծառայության վարկն ու հարգը բարձրացնելու ուղղությամբ, քայլեր ձեռնարկվեն բանակում կանանց հանդեպ հնարավոր սեռական ոտնձգությունների կանխարգելման ուղղությամբ, իսկ երկրում ներդրվի գոնե մի քիչ հավատ փոփոխությունների հնարավորության առումով վստահ եմ, որ կանանց ծառայությունը այլևս չի դիտվի որպես արտակարգ մի բան:

Այստեղ հսկայական գործ կա անելու, բայց դա հրատապություն է և անհրաժեշտություն: Ազգ-բանակն իրականում ավելի լայն իմաստ պետք է ունենա: Քանի որ կանայք ազգի կարևորագույն երկու բաղկացուցիչներից մեկն են՝ բանակից դուրս նրանց գտնվելը, երբ ազգի գոյությունն օր-օրի ավելի է վտանգվում պետք է, որ անընդունելի դառնա:

– Ասում եք տնտեսական պոտենցիալն ինչ կապ ունի: Մի՞թե պետության առաջընթացի հիմքը զարգացած տնտեսությունը չէ: Առանց դրա կարող է եք ունենալ հզոր բանակ: Եթե տնտեսական պոտենցիալը կապ չունի, ապա ինչո՞ւ է Ադրբեյջանը դրան մեծ ուշադրություն դարձնում, ամեն ինչ անում Հայաստանը շրջափակման մեջ պահելու համար: Վառ օրինակը՝ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու բացումն էր: Մեր իշխանությունները կամ մենք ի՞նչ ունենք հակազդելու այս ամենին:

– Նախ՝ Ադրբեյջանի և Հայաստանի տնտեսական հզորություններն անհամեմատելի են: Ադրբեյջանը հզոր տնտեսություն ունի՝ սպառման համար ազատ հսկայական ռեսուրսային գումարներով: Հայաստանն, իր հերթին, տնտեսություն չունի: Ողորմելի գյուղատնտեսությամբ և առևտրական տնտեսական միջավայրով մի փոքրիկ տարածք է Հայաստանը, որն ահռելի պարտքեր ունի իր ՀՆԱ-ի հետ հարաբերակցության

կտրվածքով: Ի՞նչ պետք է տեղի ունենա, որ տնտեսական առումով Հայաստանը մրցակցի Ադրբեյջանի հետ: Բաքու-Թբիլիսի-Կարս տնտեսական ծրագիր է իր ամենավերջին հատկությամբ: Այն, նախառաջ, քաղաքական հեռահար ծրագիր է՝ ուղղված Հայաստանը ոչ միայն մեկուսացնելուն, այլև օղակելուն և էթնիկ առումով շրջափակելուն: Դա Ջավախքի վերջնական մահն է, Ադրբեյջանի Թուրքիայի հետ ցամաքային կարևորագույն կամուրջը և Հայաստանի պարանոցի կախաղանային պարանը: Այդ երկպառակի ամբողջացման վրա Ադրբեյջանը ահռելի միջոցներ է ծախսել, որոնք կարող են և հետ չբերվել հեռանկարում, բայց Ադրբեյջանը, ի տարբերություն Հայաստանի, հեռուն է նայում և հստակ ծրագիր ունի իր թշնամուն վերջնականապես խեղդելու և ոչնչացնելու և, եթե հայերն այսպես շարունակեն, ապա դա ադրբեյջանցիներին անպայման կհաջողվի:

Հայաստանի մեծագույն խնդիրն այսօր ոչ թե տնտեսություն հզորացնելն է, այլ համակարգային փոփոխությունը, կոռուպցիայի ոչնչացումը, ընդ որում՝ ամենակարգինալ քայլերով մեկ գիշերվա մեջ: Էվոլյուցիոն պայքարը կոռուպցիայի դեմ Հայաստանում այլևս անարդյունավետ է լինելու: Բսկ դրա կայծակնային արմատախլման համար քաղաքական համակարգի և անձանց արմատական փոփոխություն է անհրաժեշտ: Պետք է նոր Հայաստան կառուցել, փաստացիորեն ոչ թե գրոյից, այլ միևնույնից: Միայն աներևակայելի կտրուկ փոփոխությունները կմեղմեն Հայաստանի վերջնական անկումը: Բսկ այն կասեցնելու համար գերմարդկային ջանքեր և համագործակցություն է անհրաժեշտ, որի պոտենցիալն այսօրվա հասարակությունն ու Միդլուսթը կարծես թե չունեն: Ցավոք սրտի, ամեն ինչ շատ ավելի վատ է՝ քան մենք սիրում ենք ինքնախաբեությամբ ներկայացնել ինքներս մեզ:

Անահիտ ՄԻՍՈՆՅԱՆ

◆ Կրկնեն, կպարտվեն, կմեռնեն ժողովուրդները, երբ կլուսավորվեն անասնացող կյուրապաշտությամբ, երբ նրանց մեծամասնությունը իր Աստվածը կդարձնի անձնական կաշին, երբ կթխտի այլասիրական ամեն տեսակի պարտականություն և վախով ու անվստահությամբ կնայի իր ապագային:

◆ Նա, ով ընդունում է Աստույ գոյությունը, ընդունում է նաեւ իր պարտականությունը՝ հանդէպ գերագույն իրականությանը՝ ԱԶԳ, ՀԱՅՐԵՆԻԻԸ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

◆ Հավատքի և պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը հատկացրել են Աստծուն և Հայրենիքին: Շնչել ապրել են նրանով՝ միշտ պատրաստ տառապելու, գոհաբերելու, մեռնելու նրա համար: Դա՛ է եղել իմ սրբազան ցավը, կարողոր, ուրախությունը, իմ գոյության իմաստը, իմ անմահությունը, իմ գերագույն իրավունքն ու պարտականությունը...

Քարենի ԼՇԴԵՅ

«Հիշում եմ դեմքը քո ծեր...»

Օրեր առաջ իմ բարեկամ Վարուժանը հրաժեշտ տվեց մորը։ Մայր հողը իր խոնավ գիրկն առավ Վերոնա մայրիկին։ Մեր մայրիկին...

Աշխարհի բոլոր լեզուներով հնչող էպիտետները, կարծում եմ, անգույն ու խամրած պիտի երևան Մայր բառի կողքին։ Այդ պատճառով էլ անիմաստ կլինի գրել՝ սիրելի, թանկագին և այլն...

Շատ տարիներ առաջ մի հանդիպման ժամանակ Վարուժը խնդրեց ինձ կարդալ Չարենցի «Մորս համար գազել» բանաստեղծությունը։ Կարդացի։ Նա մի պահ լռեց, իսկ ես հասկացա, որ մեծն Չարենցի տողերով կարողացա մեղմել նրա մեջ ծխացող կարոտի, թախծի, հիշողության փրփրած ալիքները։

Այդպիսին են մեծերը...

Դե, իսկ հիմա տեղին ու անտեղի հնչեցրած բոլոր ցավակցական բառերն էլ պարզապես ձայնի, հնչյունի դեր կարող են ունենալ ականջներում մի մարդու, որի համար Մայր բառը պարզապես սրբություն է։

Կորստի իրական չափը գիտի միայն ինքը՝ Վարուժանը, որ էլ էլ զգալու մոր ձեռքերի հողաբույրը, գոգնոցի հացի հոտը, որ էլ էլ վայելելու այն հրաշքը, երբ գլուխը դնում էր մոր ծնկներին, ու աշխարհի ծովերի փոթորիկները միանգամից խաղաղվում էին հոգևած ուղեղում...

Այդ ի՞նչ հրաշք է մոր դողացող մատերի մեջ, որ, սահեցնելով հոգևած գլուխը ծնկներին դրած որդու մազերի մեջ՝ նրա փական կոպերի տակից բացում է դրախտի մի եզերք, նիրվանա, որ ուրիշ ոչ ոք չի կարող տալ քեզ... Ու այդ պահին չես հասկանում՝ հոգիդ երկնքում է սավառնում, թե՞ երկրի վրա։

Վերոնա մայրիկը միշտ էլ քեզ հետ է լինելու, Վարուժան՝ լինի երազում, թե արթմնի։ Եվ երբ, աշխարհի աղմկոտ քաղաքներից հոգևած, «գժված գլուխդ առնես ավերիդ մեջ», նորից աչքերիդ առաջ կգա այն մանուկը, որ արևոտած ծնկներով վազում էր տուն ու լացակումած գլուխը թաղում իր մոր փեշերի մեջ դաշտերի ողջ ծաղիկների, ուրցի ու նոր թխած հացի բուրմունքը իր մեջ ներծծած փեշերի մեջ... Հետո կտեսնես այն պատանայակին, որ տանը գրքերի առաջ նստած սպասում է դպրոցի ծնողական ժողովից տուն դարձող մորը, որ տեսնի նրա այդ պահի հպարտությունը՝ քո ամենամեծ պարգևն ու հպարտությունը կյանքում՝ քո մոր այդ պահի հպարտությունը...

Խաղաղ ըուն Վերոնա մայրիկին։

Եվ ո՞վ Մայր հող, արժանի արա նրան քո խոնավ համբույրին...

Կ. Բ.

Հովհաննես ԵՐԲԱՆ

**Ձյուն է իջնում, կուտակվում
Մորս վրա վերևից,
Ասես փետուր է թափվում
Հրեշտակի թևերից։**

**Գերեզմանի այս հեռվում
Մեղմ դիզվում է թախծալից,
Մորս վրա մարմարվում,
Երկմաքար է թվում ինձ։**

**Այնպես մեղմիկ է դնում
Աստված փաթիլ փաթիլին,
Որ չցավի ողջ կյանքում
Մորս ցաված սիրտը հին։**

**Փաթիլվում է մեղմաձյուն,
Մարմարվում է մեղմաբար,
Աստված ինքն է ստեղծում
Մորս վրա շիրմաքար։**

МОЯ АРМЕНИЯ – ЭХО НА ВЕРШИНЕ АРАРАТА

Я жил с матерью в огромной московской коммуналке. И знал, что я армянин. Это знание пришло ко мне через армянский язык матери, на котором она разговаривала со мной в тех случаях, когда хотела, чтобы сказанное ею больше никто не понимал.

Это был наш секретный язык общения друг с другом, и, может, поэтому с тех пор армянский для меня ассоциируется с материнской любовью, семьей и душевной теплотой.

Наверное, именно эта магическая сила родного языка побудила меня позже заняться литературой и мощью слова.

Я не знал, и она мне ничего не рассказывала, о нашей нации, о том, почему мы оказались в Москве и куда делись все наши родственники, фотографии которых висели на стене. Я помню, как они смотрели на меня и в глазах у них была необъяснимая печаль.

Потом маму забрали, а меня сослали из Москвы в детский дом. Моя фамилия потеряла окончание «-ян», а ведь оно, словно тайный пароль, представляло армян другу другу, где бы они ни повстречались.

Но язык матери я сохранил, потому что каждый день тихо разговаривал с ней, просил поскорее вернуться и забрать меня из «ворбаноца».

Но вот однажды учительница географии заболела, и ее заменил черноволосый худощавый мужчина.

Войдя в класс, он медленно обвел нас взглядом, и мне показалось, что почему-то пристально посмотрел на меня. И вдруг потребовал, чтобы я назвал свое имя и фамилию.



Я медленно встал и приготовился к самому худшему.

– Садитесь, – сказал учитель и, рассказывая по классу, заявил, вызвав во мне смешанное чувство облегчения, гордости и чего-то еще хорошего: – Меня зовут Симон Аршавирович Торосян, То-ро-сян, я тоже армянин, как вот ваш товарищ, и я буду вести у вас уроки, пока Валентина Петровна не выздоровеет.

А вечером меня вызвали к директору, и в его кабинете я увидел учителя географии.

– Симон Аршавирович хочет, чтобы ты у него погостил, – сказал директор. – Я в принципе не возражаю...

– Вот это, – учитель с победоносным видом постучал пальцем по своему носу, – никогда меня не обманывало. Безошибочно определяю наш джигяр.

В этом сибирском городе было много научных институтов и в каждом работали армяне. Весть о том, что в детском доме обнаружился сирота-армянин, с легкой руки Торосяна облетела всю немногочисленную общину, и к директору повалили просители. Он им всем отказывал в усыновлении, потому что я был из семьи «врага народа».

Но в городе жила еще и старая больше-

вичка по фамилии, схожей с моей. В своем инвалидном кресле она умудрилась добраться до партийного начальства, и ей побоялись перечить.

Торосян расхаживал по квартире павлином, победно вскидывая вверх кулак и выкрикивал:

– Армянский народ не позволит ни одному своему ребенку жить в сиротском доме! Что бы ни было на этом свете с нами!

От него и других армян я узнал многое о своей нации. Каждый считал своим долгом затащить меня к себе домой и угостить армянскими блюдами. И все они были в восторге от того, что я так хорошо сохранил наш язык.

От них я узнал, что Армянское государство, с которыми они все были связаны невидимыми нитями, существовало слишком давно, намного раньше, чем вообще писалась история.

И все, пережившие это государство, из поколения в поколение были продолжением его истории.

В моих представлениях Армения виделась мне чем-то вроде летающего острова, иногда пристающего к какой-либо стране и высаживающего там какое-то количество армян.

Они продолжали поддерживать друг с другом связь через свой язык, культуру, через рассказы о своей жизни и что-то еще, непонятное никому.

И все они ждут возвращения летающего острова. А когда это случится, к ним выйдет армянин и скажет: «Пора домой, джигяр!»

Пора всем домой, хватит с нас этого ворбаноца.
